

7290

891.99.3

F-26

911
200

XIV 7.

XIV

2011

891.542-3

f-26

Թ Ա Ս Ի Բ

891.99

f-26

ՏՄԺԿԱԿԱՑ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

այր,

Մանկութեան օրեր, երազի նման
Անցար գնացիր, այլ չէր դառնալու.
Ո՞ր դուք երջանիկ, ո՞ր անհոգ օրեր,
Ընդունակ միայն ուրախացնելու...

Առջ.-Էջ.առ.-էջ

1001
1924



ԳՐԵՑ

ԳՐԱԳՆԱԶԱՐԻ ԳՐԱԳՐԱՐԱՆ



2003



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Մոխես Կարդանեանի

тифлосъ, типог. М. Варганияцъ, Тройц. пер. д. № 11.

1889

1978

Доз. ценз. Тифлисъ, 9-го Марта 1889 года.
Типографія М. Вартанянца, Тройц. пер. д. № 11.

ՀԻՆ-ԲԱՅԱԶԵԴԻ

ՀԱՅ-ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ

Ն Ի Ի Ր Ո Ւ Մ Է

ԻՐԱՆՑ ԴԱՐԻՐ-ՂՈՒՐԲԱԹ

ԸՆԿԵՐԸ:

Թ Ա Ս Ի Բ

Հեռու, հեռու, ո՛վ տերադէմ
Յիշողութեանք և կրքեր.
Ա՛խ, մե՛ք երեք էմ աչքին դէմ
Անցեալ աւուրց փայլուն պատկեր...

Բ - § § Ի.

Ա.

ՀԱՅՐԵՆԻՔ ԵՒ ՎԱՐՃԱՏՈՒՆ



Այն տեղը, ուր ես ծնւել եմ եւ որի անունը կարօտ սրտով յիշում եմ, — Հին-Բայազէդ քաղաքն է, որ գտնւում է Մասիս սարի հարաւային կողմը*): Կարմիր-սարը (Ղրղւ-դաղ) իր կրծքի վրայ տեղ է տրւել այդ աննման քաղաքին: Բնութիւնը իր բոլոր բարիքներով զարդարել է դրա չորս բոլորքը: Քաղաքը երեք կողմից շրջապատուած

*) Այս այն Բայազէդն է, որ 1837 թրւին Էնթարիււեցաւ քիւրդ-ջէյոնների բարբարոսութեան:

է կանաչազարդ բլուրներով, — հարուստ բուսականութեամբ եւ անուշահամ աղբիւրներով:

Քաղաքի արեւելեան կողմն ընկնում է Սուրբ Գրիգորի բլուրը (բերդի սրբբ Գիրքոր), որի գլխին՝ ժայռերի մէջ՝ գտնուում է համանուն ուխտասեղին, ուր կայ մի փոքր լճակ: Հազարաւոր հիւանդներ գնալով այնտեղ, մատաղներ մորթելով յանուն մեր Ս. Լուսաւորջի եւ լճի մէջ լողանալով՝ առողջացել են: Արեւմտահայաստանի կողմն ընկնում է Կարմիրսարը, որի բնական կարմիր գոյնի հետ խառնուելով հազարաւոր գոյնազոյն ծաղիկներ, հրաշալի պատկեր են ներկայացնում: Հարաւային կողմն ընկնում են՝ Պուլգները, Սեւ-ձորը եւ Քեռ-Վարդանը (Գէղարգու): Սրանք երեքն էլ հարուստ են աղբիւրներով. ամեն մի քառասուն-վաթսուն կանգուն տարածութեան վրայ անցորդը կըտեսնի պարզ, սառն եւ անուշահամ աղբիւր: Քեռ-Վարդանը մեծ ուխտատեղի է: Պատմում են, որ քաջ Վարդան զորավարը իր զօրքով անօրէնների գէժ պատերազմ գնալու ժամանակ ճանապարհին ջուր չի գտնում: Ամբողջ զօրախումբը ծարաւից ուժասպառ եղած՝ չի կարողանում շարունակել ճանապարհը: Վարդանը չըբում է այնտեղ եւ Աստուծոյ օգնութիւն խնդրում: Աստուծ

լաւ է նրա աղօթքը եւ այն աղբիւրները գուրս են բղխում ու յագեցնում զօրքերի ծարաւը: Աղբիւրները խառնելով իրար՝ կազմում են մի գետ, որ մինչեւ այժմ նրա անունով կոչուում է Քեռ-Վարդան: Քաղաքի հիւսիսային կողմն ընկնում է Քարաքիթ ժայռը, որ հարուստ է վայրի ոչխարներով եւ երէններով:

Քաղաքն այսպէս երեք կողմից շրջապատւած բնական պարիսպներով, Կարմիր-սարի լանջերից աստիճանաբար ձգւում է մինչեւ օտարօտը, որին յաջորդում է լայնատարած Քանաւուկ գաշտը: Այնտեղ են գտնուում պարտէզները, չայիրները եւ ջրաղացները:

Քաղաքի ամենավերին մասում, Կարմիր-սարի կրճքին եղած մի բարձրութեան վրայ գտնուում է միջնաբերդը, — այն հսկայական շինուածքը, որից հազարաւոր թնգանօթների գնդակներ չեն կարողացել մի խիճ անգամ պոխել: Ասածիս ապացոյց կարող են լինել այն գնդակները, որոնք մինչեւ այսօր ծեփւած են նրա պատերին, — ինչպէս յեխը ծեփենք պատին, կսլի, մնայ կպած: Բերդը շինուած է սրբատաշ քարերից, այնպիսի գեղեցիկ քանդակներով, որ փայլ է տալիս քաղաքին: Բերդի կենտրոնից բարձրանում է մի ահագին մինարէթ, որ իր ձեւով եւ քանդակներով

գրաւում ճանապարհորդների ուշագրութիւնը: Բերգից փոքր ինչ ցած գտնուում է Ս. Պարապետ եկեղեցին եւ նրա գաւթում ուսումնարանը: Կրանցից յետոյ քաղաքի աներն են սկսուում, որոնք կարծես գիտութեամբ լինին դասաւորւած: Վերին մասում գտնուում են հարուստների գեղեցիկաշէն տները, յետոյ որքան ցածրանում են՝ այնքան կորցնում են իրանց գեղեցիկութիւնը:

Ս.Հա այս քաղաքումն եմ ծնել եւ եւ այստեղ անցկացրել իմ մանկութեան երջանիկ օրերը: Գլխից սկսեմ իմ անցեալը, որպէսզի երկար տարիների ընթացքում չմոռանամ այն վշտերը, որոնց պատճառաւ կեանք եմ վաշտացնում օտարութեան մէջ, որոնցից ստիպւած թողել եմ սիրելի հայրենիքս, հեռացել եմ բարեկամներից եւ սիրելիներից . . . ու պատանեկական առողջ կեանքս եւ թանկագին բազմներս մաշում պանդխտական հոսանքի մահաբեր ալիքներ մէջ եւ նրա անգութ հարածների տակ . . .

Ես տասնըմէկ տարեկան էի, որ հայրս ինձ տըւեց ուսումնարան, վարժապետ Լ թ օ ի (Լութֆիլի) մօտ: Սա՛ չգիտեմ՝ Վանայ որ գիւղի մի տէրտէրի մօտ մի քանի տարի ուսանելով, կարողացել էր «Ժամագրքի» ու «Սաղմոսի» վարժ կարգալը սովորել եւ գալով մեր քաղաքը, ստացել էր տիրացւութեան եւ վարժապետութեան պաշտօն:

«Տիրացւութիւնը» այն կողմերում շատ մեծ դեր էր խաղում: Վարժապետը որքան էլ ուսում, գիտութիւն ունենար, որքան էլ հմուտ լինէր իր գործին, ոչինչ էր, եթէ չունենար յարգակ ձայն, չկարողանար կիրակի օրերը բարձր ձայնով «Առաւօտ լուսոյ» եւ «Նորաստեղծեալ» երգել: Ընդհակառակը՝ մի մարդ որքան էլ տգէտ եւ անուսում լինէր, եթէ ունենար լաւ ձայն, գիտենար եկեղեցական արարողութիւնները՝ նա կը համարէր գիտնական: Սեր Լ թ օ ն էլ վերջինիցս էր:

Առաջին անգամ Քերեկանը կոնատակիս, հօրս հետ մտնելով ուսումնարանի շէմքից, տեսայ առաջս կանգնած մի սեւ, հաստլիկ եւ բարձրահասակ մարդ, — ճիպտոր ձեռքին: Աշակերտները կարգով ծալապատիկ շարւած էին պատերի երկայնութեամբ, իւրաքանչիւրի տակը գցած մի այծի կամ ոչխարի մորթի:

եւ կամ փոքրիկ «գօշակներ»։ Հարուստների որդիքը պարզ որսչուժ էին աղքատներից։ — Սուսայինների տակին գցած էին «գօշակներ», իսկ վերջինների տակ՝ «մորթիք»։ Բացի դրանից՝ հարուստների որդիքը մի առանձին կարգ էին կազմում եւ շարած էին այն պատի երկայնութեամբ, որի վրայ գտնուում էին լուսամուտները. իսկ աղքատների որդիքը նրանց հանդէպ, ուր լոյսը աւելի նրւազ էր։

Վարժապետը խօսելով հօրս հետ, երբեմն իր կրակոտ աչքերը դարձնում էր դէպի աշակերտները եւ ձեռքի ձիւղտը թափահարում, — հասկացնելով, որ պէտք է հանդարտ կենալ, կամ ցածր կարգալ, կամ չըհաղել եւայլն։ Ես չըհասկացայ նրա եւ հօրս խօսակցութիւնը, որովհետեւ իմ ուշագրութիւնս լարած էր դէպի աշակերտները. գիտում էի, թէ ինչպէս խեղճերը լուռ նստած, հաստ-հաստ գրքերը՝ «Սաղմոս», «Ժամագիրք», «Աւետարան», «Նարեկ» եւայլն գոգներին, չէին համարձակուում մի փոքրբարձր շունչ քաշել, որ չըլինի թէ վարժապետի բարկութիւնը շարժեն։ Հայրս վերջացրեց իր խօսակցութիւնը եւ վարժապետը ձեռքը մեկնեց դէպի ինձ։ Ես թէեւ չհասկացայ ինչ էր նշանակում այդ, բայց հայրս հրբամայեց համբուրել վարժապետի ձեռքը։ Ան-

միջապէս կատարեցի նրա հրամանը, — բռնելով վարժապետի սեւ ու կոշտ ձեռքը, որ ամենեւին համապատասխան չէր նրա պտրտամունքին, զգանքով մօտեցրի շրթունքներիս։ Նա ձիւղտը ձեռքին ձօձելով՝ ասաց.

— Ծեւնում ես այս ձիւղտը . . . պէտք է խելօք կենաս, վարժապետիդ խօսքին հնազանդ լինես, դասերդ լաւ սովորես, չար աշակերտներ այստեղ շատ կան, (ի հարկէ աղքատների համար էր ասում), նրանց խօսքին չըհետեւես, որ այս ձիւղտից ծեծ չստանաս, եթէ ոչ, սա ամեն ժամանակ պատրաստ է . . .

Սյր իսկ բոսկից ես սկսեցի նրան ատել, որովհետեւ ինձ՝ իբրեւ մանկան՝ փոխանակ խրախուսելու, յոյսեր տալու, գեղեցիկ ապագայ առաջս դնելու, ինձ ցոյց էր տալիս փայտ։ Եթէ ես հօրիցս չվախենայի, իսկոյն կըշարտէի գիրքը եւ դուրս կըրիսխչէի այն տարտարոսից, բայց հօրս երկիւղն սախպեց ինձ լուել։ Վարժապետը հրամայեց մեր հարեւան եւ իմ ընկեր Վահանին, որ տեղ տայ ինձ իր «գօշակի» վրայ, մինչեւ ինձ համար բերէի։ Նա ուրախութեամբ մի կողմ քաշւեց եւ տեղ տրւեց։ Եկաւ վարժապետը եւ մի անգամ շուտ-շուտ ասելով «այբ ու բենը» մինչեւ վերջ, — կարծես ցոյց տալու համար, թէ ինքը շուտ-

շուտ կարգալ գիտէ, հեռացաւ եւ հրամայեց, որ վաղը անպատճառ գիտենամ: Երեւակայեցէք, ի՞նչպէս մի անգամից միտքս պահէի ամբողջ այբ ու բենը, քանի որ ընկերի հետ խօսելը կամ մի բան հարցնելը դատաւան մէջ՝ խտրու արգելած էր: Ուստի լուռ ու մունջ նստած՝ աչքերս յառած գրքիս, միայն տառերի ձեւերն էի տպաւորում մտքիս մէջ: Բայց ի՞նչ էր անում այդ միջոցին վարժապետը:

Հիւսիսային պատին կից՝ երկու-երեք արշին լայնութեամբ յատակը աւելի բարձր էր շինած, այնպէս՝ որ մի տախտի ձեւ էր ստացել, պատուհաններին կից. նրա վրայ փռած էր մի թաղիք, — որ ինչպէս յետոյ իմացայ, եկեղեցուց էր բերել. վերեւի կողմը դրած էր մի բարձ: Վարժապետը երկար ձգւած էր նրա վրայ եւ կրթնած բարձին. նա աչքերը ձգել էր դէպի Հայկական պար լեռնաշղթան եւ խորասուզել մտածմանց մէջ: Մերթ գլուխը բարձրացնում էր նա բարձի վրայից եւ դառնում՝ դէպի նրանց, որոնք մի փոքր լսելի ձայնով էին կարգում, հետեւեալ խօսքերով.

— Ե՛յ, դ՛ու, եղան պող, էշի ականջ, ուզտի գլուխ եւ այլ այսպիսի ածականներ: Եւ եթէ աշակերտներից մէկը համարձակում էր իրեն արգարացնելու համար մի ծպտուն հանել,

անմիջապէս չարաչար պատրժւում էր: Այսպէս անշարժ դուրժեամբ անցկացրի երեք-չորս ժամ: Քաղցն սկսեց ինձ տանջել: Հանեցի գրպանիս հացը եւ սկսայ ուտել: Թէպէտ Վահանն զգուշացրեց ինձ, բայց ես քաղցածութիւնից ուշագրութիւն չդարձրի նրան, շարունակեցի գործս: Նա կրկին փսփսաց ականջիս.

— Եթէ վարժապետը նկատի «ֆալստայ» կըդնէ:

— Ի՞նչ եմ արել, որ «ֆալստայ» դնէ, — գոռացի ես երկիւղից, որովհետեւ այն անիծածի անունը վաղուց լսել էի ուսումնարանի աշակերտներից: Իմ ձայնից վարժապետն ուշք դարձրեց մեզ վրայ:

— Ի՞նչ պատահեց, — ազաղակեց նա ձի պտոր ձօձելով: Ոչ ոք չըհամարձակեց ձայն հանել:

— Ի՞նչ էր, Վահան, — հարցրեց ընկերիցս:

— Ո՛չինչ, Քեալաշը հաց էր ուտում՝ ըզգուշացրի:

— Ի՞նչու ինձ չասացիր: Վահան, եթէ ուրիշը լինէր, անպատճառ կըպատժէի, բայց քեզ ներում եմ, — աւելացրեց նա շողոքորթութեամբ:

Այդ միջոցին ես մեծ տագնապի մէջ էի, աւելի մեծ պատժի էի սպասում: Ես այնքան

էլ երկչօտ չէի, այլ դողում էի ամօթից, որովհետեւ այն օրւայ ծեծը կրլինէր ինձ յաւիտենական նախատինք, թէ՛ ուսումնարան մտած «առաջին» օրը ծեծ կերաւ: Բայց սխալում էի: Վարժապետը ծիծաղն երեսին կանչեց ինձ.

— Օհ, խելօք Բեալաշ, մօտ արի, գիտէիր վարժապետդ օտար է, կերակուր պատրաստող չունի, նրա համար ուտելիքներ ես բերել: Վէ, հան տեսնենք ի՞նչ կայ գրպանումդ:

Իսկոյն գատարկեցի գրպանիս եղածը եւ տըւի նրան: Նա միայն տըւածիս մէկ քառորդը վերադարձրեց ինձ, ասելով.

— Աշակերտը որքան շատ ուտէ, այնքան բթամիտ եւ անընդունակ կրլինի. ուստի ուսուցչի պարտականութիւնն է, որ մի որոշեալ չափով ուտելիք տայ աշակերտներին եւ ոչ աւելի:— Իսկ աւելորդը՝ ի հարկէ կըմնայ իրեն:

«Փալախայից» աղատելով՝ ուրախ-ուրախ գնացի նստայ տեղս, հացս կերայ, կրկին շարունակեցի նայել գրքիս, մինչեւ երեկոյեան զանգալների զանգահարելը: Այդ միջոցին միայն վարժապետը վերկացաւ տեղից, հրամայեց բոլորին ոտքի ելնել, միաձայն երգել «Փառք քեզ Բարձրեալ» աղօթքը: Յետոյ բոլորս միասին իջանք եկեղեցու գաւիթը: Աշակերտների այն մասը, որ Վերի-թաղեցիք էին՝

կարգով կանգնեցին այն կողմի դռան առաջը. խակ միւս մասը կանգնեցին միւս դռան կողմը, որ պէտք է գնային Աւզիգեօռայ թաղը: «Խայթէն»՝ այսինքն աւագ աշակերտը, որ Վահանն էր, ուսումնարանի սանդուղքների գըլխից բարձր ձայնով ազդարհեց.

— Պաշտօն ուղղութեան:

Բոլոր աշակերտներս ուղիղ կանգնեցինք:

— Պաշտօն խոնարհութեան:

Բոլորս խոնարհեցինք, գլուխ տըւինք վարժապետին:

— Պաշտօն ի միութեան:

Ձոյգ-ղոյգ կանգնեցինք եւ երեսներս շրտկեցինք դէպի գնալու ձանապարհը:

— Պաշտօն ընթացից:

ձանապարհ ընկանք:

Սոյն վերջին սովորութիւնը Արամեան վարժարանում (այդպէս էր կոչւում մեր ուսումնարանը) մնացել էր սլարոն Սեգրակ Սեգրակեանից:

Երկու-երեք ամիս երթեւեկելով ուսումնարան, ես ծանօթացայ թէ՛ վարժապետի բընաւորութեան եւ թէ՛ ուսումնարանի կանոններին:

Առաւօտեան արեւը նոր ծագած՝ պէտք է գնայինք ուսումնարան: Ներս մտնելուն պէս՝

պէտք է գլուխ տայինք վարժապետին, որ շատ անգամ քնած էր լինում, եւ բերած ուտելիքներս դնէինք պատուհանում փռած սրվուռոցի մէջ, գնայինք տեղներս նստէինք ու կարգայինք: Ինքը՝ վարժապետը կամ «խալֆէն» մեր բերածի մի մասը կը վերցնէին, իսկ միւսը կը վերագարձնէին մեզ:

Մենք զուրկ էինք այն բոլոր իրաւունքներէր, որ Սատուած ստեղծելով մարդուն՝ պարգեւում է նրան . . . Չունէինք իրաւունք մեզ արգարացնելու համար մի որեւէ խօսք ասելու, երբ վարժապետը կանգնած էր լինում: Մենք զուրկ էինք կամքից, որովհետեւ չէինք կարող դուրս գնալ, երբ ջուր էինք կամենում կամ հարկաւորութիւն . . . այլ պէտք է սպասէինք մինչեւ նշանակեալ ժամանակը գար, որ բոլոր աշակերտներս — սկսած փոքրերից՝ հերթով զոյգ զոյգ դուրս գնայինք. թէեւ բացառութիւն լինում էր . . . բայց «Փալախան» պատրաստ էր:

Մենք բանդարկած էինք . . . որովհետեւ մէկ րօպէ միջոց չունէինք աղատ ժամանակ անցկացնելու, խաղալու: Ս. Ա. Ա. օտից փակւած էինք ուսումնարանի անմաքուր օդի մէջ, մինչեւ կէսօր՝ «Ե վ լ ա ն ա մ ա զ ի» *) ժա-


*) Այն աղօթքը, որ մահմեդականները օգէնքով կէսօրին «մօ լ լ ա ն» բարձր ձայնով կատարում է բերդի մինարէթից:

մանակ: Յետոյ իրաւունք ունէինք գնալ տուն, ճաշել, եւ անմիջապէս վերագառնալ. կրկին փակւած մինչեւ երեկոյ: Դասավիջոց ասած բանը չկար: Վերջապէս մենք «ստրուկ» էինք. . . որովհետեւ՝ եթէ տաճիկ լամուկները (տղայքը) մի տեղ պատահէին մեզ եւ ծեծէին, իրաւունք չունէինք ձայն հանելու, — եթէ գիտենայինք անգամ՝ թէ նրանց կը յաղթենք: Սյր նրանից էր, որ լամուկները ծանօթ էին մեր վարժապետին. կը գնային կը մատնէին, եւ այն ժամանակ վայն կեկէ էր մեզ տարել. . . Բաւական էր, որ «մայթաք»ի (ուսումնարանի) լամուկները «կաշառք» տային մեր վարժապետին, թէ՛ ձեր այսինչ աշակերտը չար է, մեզ ծեծում է, պատժիր. . . Միւս օրը այն անմեղ աշակերտին կը զգէր «Փալախայի» տակ, այնքան կը ծեծէր, որ խեղճի ոտներից արեան առակներ հոսէին: Ս. Հա այսպէս տանջւում էինք, մի յիմար, մի կեղծաւոր, կաշառակեր եւ ամեն տեսակ անբարոյականութեամբ օժտուած մի վարժապետի ձեռի տակ . . .

Մենք միայն մի մխիթարութիւն էինք գտնում ուսումնարանում, այն է՝ որ Վահանէ էր մեր «խալֆէն»:

«Խալֆին» ընտրում էր վարժապետը, նոր տարուն: Մեծ աշակերտներից նա՝ որ նոր-ուսրուն ամենից մեծ ընծայ բերէր վարժապետին,

1001
1981



փոխարէն կատանար ամբողջ տարւայ «խալ-
ֆայութիւնը»: Եւ որովհետեւ Վահանը հա-
րուտա մարդու որդի էր ու լաւ ընծաներ էր
բերել, ուստի եւ ստացել էր այդ պաշտօնը:

Վարժապետի բաղակայութեան ժամանակ
նրա իրաւունքները պատկանում էին «խալ-
ֆային»: Նա պէտք է իրանից ցածր աշակերտ-
ներին դաս հարցնէր եւ դաս տար. պէտք է
չարերին պատժէր, ծեծէր եւ այդպիսով վար-
ժարանը կարգի պահէր, մինչեւ վարժապետի
վերագարձը: Բացի գրանից՝ ուսումնարանից
դուրս չարութիւն անող աշակերտների անուն-
ները պէտք է ցուցակագրէր եւ միւս օրը ներ-
կայացնէր վարժապետին կամ ինքը պատժէր:

Միայն խալֆայութիւնը չէր, որ Լ թ օ ն
կաշառքով էր տալիս, այլ եւ՝ եկեղեցում փոխ
ասելը, գիրք կարդալը, ծ ն ծ դ ա յ *) ածելը,
Իւզաբերից աւետարանի մտմ բռնելը, եւ այլն:
Խալֆայից յետոյ՝ երկրորդ լաւ ընծայ բերողը
կատանար Զատկին եւ Զրօրհնէքին «Պանիւշի»
կարդալու իրաւունքը. երրորդը՝ «Պօղօսի» կար-
դալու եւ այլն: Իրանք մեծ նշանակութիւն ու-
նէին Բայաղէ-դցոց համար: Հայրը բախտաւոր

*) Ծ ն ծ դ ա ն երկու ափսեանման դործի է, դեղին
պղնձից, որ խշտցներ ածելու ժամանակ՝ տիրացուն իրար
է խըում եւ մեծ աղմուկ հանում:

էր համարում իրան, տեսնելով իր որդուն սե-
ղան բարձրացած գիրք կարդալիս կամ ծ ը ն ծ-
դ ա յ ածելիս: Լ թ օ ն էլ հասկանալով այդ,
շատ վարպետութեամբ էր վարւում . . .

Վահանը մի խելօք, առողջակազմ, եւ քաջ
պատանի էր: Գեռ Լ թ օ ի գալուց առաջ՝ նա սովո-
րել էր վարժապետ Սեդրակ Սեդրակեանի մօտ,
եւ ասելի գիտէր, քան թէ Լ թ օ ն: Գիտէր Սուրբ
պատմութիւն, Հայոց լեզու, մասնաւոր Հայոց
պատմութիւն, եւ թւաբանութիւն: Թէեւ նա մեր
ուսումնարանը գալու կարիք չունէր, բայց չա-
րութեան ու շարունակ տաճիկ լամուկների հետ
կոււելու պատճառով հայրն ուղարկում էր նը-
րան, որ ուսումնարանումն հանգիստ մնար:

Վարժապետը սրճարան գնալու ժամանակ,
(այդ սովորութիւնն էլ ունէր), բոլոր աշա-
կերտներին ուրախութեանը չափ չկար: Գիտէինք,
որ Վահանը «լաւ-լաւ» բաներ պէտք է պատ-
մի: Գրքներս ծալում էինք մի կողմ դնում,
եւ լուռ սպասում . . . Նա նստում էր վարժա-
պետի տեղը եւ սկսում պատմել՝ Հայոց պատ-
մութիւնից, Ս. Գրքից եւ կամ կարդում էր իրան
այն երգարանը, որին սրբի պէս էր պաշտում:

Մեր ուրախութեանը չափ չկար ասացի,
որովհետեւ ինչ որ գրած էր այն երգարա-
նում, բոլորը հասկանում էինք. գրած էր այն

լեզուով, որով մենք խօսում էինք: Երգարանի անունն էր «Ազգային երգարան» . . .

Յանկարծ ներս էր մտնում վարժապետը: Մեր ուրախութիւնը փոխում էր տրտմութեան . . . Կրկին բաց էինք անում հասկանալի գրքերը եւ սկսում մտքներումս թութակի պէս վրայ տալ: Սկսում էր դաս հարցնել: Նա ոչ կարգալուծ էր ուշադրութիւն դարձնում, ոչ էլ հասկանալուն, այլ նայում էր կարգալու «եղանակին»: Վայն եկել էր նրան տարել, ով սխալմամբ «Սաղմոսը» «Աւետարանի» եղանակով կարդար կամ Աւետարանը Սաղմոսի: Եւ այս բոլորը որ կրում էինք՝ մեր ծնողաց միամտութիւնից էր . . . «Մինչեւ աշակերտը չըծե՞ծի, մարդ չի դառնալ», կրկնում էին նրանք ամեն անգամ: Նրանց կարծիքով՝ ծեծը ամենալաւ միջոցն էր աշակերտին խոնարհութիւն սովորեցնելու: Եւ այդ էր պատճառը, որ մենք զրկւել էինք մի խելօք, եռանդուն, քաջ եւ վերջապէս անձնանրէր վարժապետից, — որպիսին էր Ս. Սեդրակեանը, եւ ընկել էինք մի գազանի ձանկ, որ ինչպէս սարդ՝ ծծում էր մեր արիւնը, եւ թուլացնում մեզ թէ բարոյական-հոգեկան եւ թէ ֆիզիքական կողմից . . . Իր ծեծով հանում էր մեր մանուկ սրտից «քաջութեան հոգին», (որ բը-

նականաբար ամեն մարդու տրւում է, բայց շատերից անյայտանում զանազան ճնշումներից) . . . եւ նրա տեղը դնում «ստրկութեան հոգին» . . .

Այո՛, մեր ծնողաց միամտութիւնից էր եղել, որ մենք զրկւել էինք Սեդրակեանի պէս խելօք վարժապետից: Թէեւ ես նրան աշակերտութիւն չեմ արել, բայց ինչպէս Վահանը պատմում էր՝ նա ուսել էր իր տէրտէր հօր մօտ, որ իր գիտութեան պատճառով կոչւում էր «Ձոչ գլուխ» (մեծ գլխանի, լիք գլուխ): Յետոյ գնացել էր սուրբ Յովհաննու (Ուշ-քիլիսա) վանքը եւ աւելի կատարելագործւելով՝ վերագարձել էր Բայաղէդ, եւ ստացել ուսուցչութեան պաշտօն. բայց շուտով էլ զրկւել էր, հակառակ լինելով տեղացոց խելքին: — Առաջին՝ որ նա չի ունենում լաւ ձայն՝ «Նորաստեղծեալ» երգելու համար: Երկրորդ՝ աշակերտների ձեռքը «ժամագիրք», «Սաղմոս» տալու փոխանակ, տալիս է աշխարհաբար դասագրքեր *):

Բացի դրանից՝ նա փոխանակ աշակերտներին սաստելու, ինքն է սովորեցնում իրար պաշտպանել — ընկերասիրութիւն, չլիսխենալ լամուկներից, քաջ լինել եւ այլն: Այս բոլորը

*) Այնտեղացիներէ կարծիքով՝ աշխարհաբար բոլոր գրքերը «Փ ռ օ գ ի» (բողոքականէ) գրքեր էին, որոնց դործածելը Լուսաւորչականները մեղք էին համարում:

կասկածի տակ են ձգում նրան. եւ այդ կասկածը ուղիղ են կարծում մի դէպքով, որի պատճառով էլ արձակում են նրան: Մի անգամ պարոն Սեդրակեանը հիւանդութեան պատճառով, չի կարողանում Աստուածածնայ պատրասել, ուտում է: Մի քանի մարդիկ իմանալով այդ, անմիջապէս յայտնում են իրանց բարեկամներին եւ քահանաներին: Քահանան քարոզ է խօսում եկեղեցում, եւ միաձայն վճռում են թէ նրան արձակել ուսուցչութիւնից, եւ թէ՛ հեռացած համարել Լուսաւորչական եկեղեցու գրկից, մինչեւ չըզջայ եւ իր մեզքը խօստովանելով՝ չապաշխարի ծովապահութեամբ . . .

Այդ խառնաշփոթ ժամանակին Լթօն գալիս է Բայազէդ: Նա նախ իր գեղեցիկ ձայնով է շլացնում տեղացոց, յետոյ՝ ինչ ինչ տեղից իմանալով, որ այն տարին այն ինչ օր արեգակը պէտք է խաւարի, յայտնում է բոլորին. եւ ինչպէս ասում է, այնպէս էլ կատարում է: Այնուհետեւ նրան փիլիսոփաների կարգն են դասում եւ գտնում յարմար թէ վարժապետութեան եւ թէ տիրացութեան:




Բ.

Ղ Ը Ծ - Ա Ղ Բ Ի Ի Բ

Լաւ է միտ աւելք, ԱնՎե՛ն ԲՈՒԹԻՒՆ,
 Ահա՛ այն միակ վսեմ յատկութիւն,
 Որ կեանք է տալիս մեզ այս աշխարհում,
 Եւ անմահութիւն վերին երկնքում: . . .

Ղ. Աղայեան



մբողջ չորս տարի երթեւեկելով ուսումնարան՝ ոչ մի անգամ «Փալախայ» չտուցայ, որովհետեւ հայրս ամեն կիւրակի վարժապետին տուն էր բերում եւ լաւ պատիւ տալիս: Զատիկ ճրագալոյց երեկոյեան՝ վարժապետը սովորականին պէս մեր տանը լինելով՝ ընկերներով խնդրեցինք, եւ իրաւունք ստացանք որ գնանք սարը՝ դբօնելու:

Զատիկ կիւրակի օրն էր:

Բայազէդը սովորականից աւելի կենդանութիւն էր ստացել: Բոլոր Հայերը ս. պատարագից վերագարձած՝ եւ մօտ բարեկամ

ներով հաւաքւած միասին, նստել էին մի փոքր նախաճաշիկի, որ շուտով վեր կենային գնային ծանօթ բարեկամների Ձատիկը շնորհաւորէին: Ամեն տեղից ուրախութեան աղաղակներ էին լսում:

Մենք էլ մօտ քսան մտերիմ ընկերներ հաւաքւել էինք մեր դռան առաջ եւ սպասում էինք Վահանին, որ գնանք սար: Ամենքս էլ ուրախ էինք եւ նոր շորերով զարդարւած:

Մին էլ այն կողմից մի Վահան չէ՝ մի քէյրան (եղնիկ) եկաւ, ոտից մինչեւ գլուխ նոր շորերով զարդարւած: Վրայից հագել էր կապոյտ «չուխա չարբեազին» (արխալուխի ձեւի), կուրծքը բաց եւ թեւքերը քշտած: Մէջքը ամբողջաբար էր բարակ եւ թանկագին «քիրմանի շալով»: Տակը հագել էր կարմիր չուխա «գէջալրկ» (բաճկոն), որի թեւերը, կուրծքը եւ օձիքը նախշած էին ոսկեթելերով. թեւերը եւ կուրծքը պինդ կօճկած էին Վանայ արծաթէ կօճակներով: Հագել էր կապոյտ չուխա շալվար, կողքերը բարակ, իսկ փոխքերը կէս թըղաչափ նախշած ոսկեթելերով: Գլխին ծածկած ունէր կարմիր ֆէս, որի վրայ փաթաթած էին մետաքսեայ մուգ-մանիշակագոյն եւ կապոյտ ոլորած «եազմէք» (աղոււխներ): Ոտքերին ունէր Արզրումայ կարմիր «ջրզմէք»:

Առանց այդ արհեստական զարդարանքների էլ, բնութիւնը ոչ մի գեղեցկութիւն չէր խնայել նրան տալու:

Բայազէդու անմահական ջուրը եւ առողջարար կլիման իրանց զօրութիւնը ցոյց էին տըւել նրա վրայ:— Զինարի բօյը եւ առողջ կազմւածքը ունէին իրանց հետ եւ կարմիր գոյն: Հայկական արծւաքթի երկու կողմից եւ սեւորակ ունքերի տակից փայլում էին երկու սեւ եւ վառվռուն աչքեր: Բեխերը նոր էին սեւին տալիս: Նա ձեռքին բռնած ունէր իր սեւ խալերով չօճակ (մահակ) որի գլուխը զարդարել էր գոյնզգոյն հուլունքներով. փայտի վերեւի կողմը ծակել էր, թեւ անց կացրել եւ նրա միջով ձեռքը դուրս հանել: Սյս բոլոր գեղեցկութեամբ նա նմանում էր մի դիւցազնի: Մեզ մօտենալուն պէս՝ նա ուրախուրախ ձայն տըւեց,

— Բարի լոյս, տղէրք, ի՞նչ քէֆի եք:

— Աստուծոյ բարին, ձայն տըւինք միաբերան, — այսքան էլ մարդու սպասել կրտան:

Վահանը իր հետ բերել էր եւ իրանց փոքր քիւրդ ծառային, որի ձեռքին կար մի կապոյ պաշար — ուտեղիք: Մեզանից իւրաքանչիւրս էլ իրանց տանից ցամաք կերակուրներ էր բերել — ձու, գաթայ, քիւֆիթայ, պանիր եւ այլն:

բոլորը կապեցինք մի սիւռոցի մէջ, տըլինք Վահանենց ծառայի շալակը եւ ճանապարհ ընկանք դէպի Ա ը շ - ա զ բ ի ւ ը :

Սլեւոր ձմեռը նոր էր հաւաքել իր սպիտակ փեշերը: Նրան յաջորդել էին գարնանային բարիքները: Բնութիւնն էլ կարծես ուրախութեամբ էր դիմում Հայոց Չատիկին: Սրեգակն իր կենսատու լոյսը սփռել էր ամեն տեղ եւ ջերմ ճառագայթներն ուղղել դէպի ներքեւ: Գարնանային թռչունների անոյշ դայլայիկներով թնդում էր օդը: Ամեն ինչ ուրախ էր. միայն ծերուկ Մասիսն էր մեր հանդէպ, որ բացառութիւն էր կազմում: Միայն նա էր, որ իր գլուխը պատել էր սեւ-սեւ ամպերով եւ սքողել մառախուղով. կարծես չէր ցանկանում մասնակցել բնութեան այդ ուրախութեան: Այն արեգակը՝ որ զարդարել էր նրա շուրջ եղած բոլոր սարերին, չէր կարողացել նրա վրայ եւս ներգործել: Կարծես նրա համար Չատիկ չէր, այլ ձմեռնային մի հասարակ օր . . .

Գառն ու ոչխար իրար խառնւած՝ փռւել էին սարերի լանջերին եւ ագահաբար քաղում էին սիզաւէտ խոտը: Զարածճի ուլերն այլ եւս չէին լսում հովիւի սրնգի ձայնին. նրանք հաղիւ մի անգամ իրանց մայրերի հետ դուրս էին եկել

արօտ*). մերթ կրծում էին խոտը եւ մերթ տրտինգ տալիս այս քարից այն քարը:

Մենք էլ այնպէս խմբովին, փայտերը ձեռքներիս, ճանապարհին երգելով, ծաղիկներ քաղելով հասանք Ա ը շ - ա զ բ ի ւ ը : Սա գըտընւում է Գեռ-Վարդանայ հիւսիսային կողմը, մի բլուրի գլխի՝ հարթ տեղում: Մարգարտի նման պարզ ջուրը գլխալով դուրս է թափւում քարի ձեղքից եւ հոսելով դէպի ցած՝ խառնւում է Գեռ-Վարդանայ հետ:

Հասնելով աղբուրը՝ Վահանենց ծառային եւ մեր քաղած ծաղիկները թողինք այնտեղ՝ իսկ մենք իջնելով ձորը, համբարեցինք Գեռ-Վարդանը եւ վերադարձանք:

Երկար այս ու այն կողմ թռչկոտելով բաւական հոգնել էինք. ձգւեցինք կանաչ խոտերի վրայ եւ սկսեցինք ընտրել իւրաքանչիւրս իր քաղած ծաղիկները. յետոյ փնջելով կապեցինք մի-մի փայտի վրայ, ցցեցինք գետնին, — իւրաքանչիւրս իր առջեւ: Վահանն սկսեց իր գրաւիչ ձայնով երգել «Սղնիւ ընկերը»: Գեռ երգը չէր վերջացրել, որ մի քար թրըն-

*) Բայազէդցիք սովորութիւն ունին Չատիկ երեք օրը բոլոր ընտանի կենդանիներէն իրանց ձագուկներէ հետ — կոյն ու հորթը, ոչխարն ու գառը այժն ու ուլը և այլն, միասին ազատ դուրս թողնել արօտ:

փայլով ընկաւ մեզանից փոքր ինչ հեռու: Երգը ընդհատուեց եւ բոլորեքեանքս փայտներս վերցնելով՝ վեր թռանք տեղիներիցս: Այս ու այն կողմ՝ նայեցինք, տեսանք մեզանից մօտիկ մի խումբ լամուկներ, որոնք արագ-արագ գալիս էին դէպի մեզ:

— Տղէրք, ասաց Վահանը, «խորովածի հոտ են առել, բայց չըգիտեն որ էջ ենք գաղում» . . . դրանք կարծում են քիչ ենք, կողոպտելու «իշտահօլ» են գալիս . . . Աբա տրղէրք, զօջազ կացէք . . .

Նրանք բաւականին մօտեցան. ճանաչեցինք՝ մէկը Ահմադ-աղի տղէն՝ Սօսընն էր, որ իր անառակութեամբ յայտնի էր բոլոր Հայերին, մէկն էլ Գէորգ-աղի տղէն՝ Բագօն, Բայագէդու Հայերի «Միլլաթ բաշու» *) որդին: Վերջինենց ընտանիքը մի բացառութիւն էր կազմում այնտեղի Հայերի մէջ: Հայրը յայտնի էր իր հարստահարութիւններով եւ վաշխառութիւնով: Եղբայրտիկքը Հայերի հետ բնաւ նիստ ու կաց չունէին: Ինքն էլ դեռ իր մայրենի

լեզուն չսովորած, մտել էր տաճկաց «մայթաբը». եւ մանկութիւնից նրանց հետ լինելով՝ սնել էր նրանց հոգով . . . որ եւ միշտ լամուկների հետ էր ման գալիս ու նրանց հետ ընկերութիւն անում: Եւ այդ էր պատճառը, որ մեր ընկերները նրա հետ այնպէս էին վարուում՝ ինչպէս մի թուրք լամիկի հետ . . . ամենքը նրան «թուրքի թաղի» էին կոչում, որ նշանակում է թուրքի շուն:

Այդ երկուսի հետ կային էլի մօտ քսան ուրիշ լամուկներ:

Առաջին անգամ նրանց քայլերից երեւում էր, որ մեզ հետ կոււելու եւ իրանց սովորութեան համեմատ՝ մեր գրպանների իրերը խլելու մտադրութեամբ էին գալիս. բայց երբ տեսան, որ մենք էլ քիչ չենք ու բոլորս էլ «փէտաւոր», չըհամարձակեցին:

— Գիտես ինչ կայ, Վահան, ասաց Սօսընը մեղմաբար, — մեզ էլ մի քանի օր տօն է. եկել ենք այստեղ ուրախութիւն անելու. պէտք է այս աղբիւրը մեզ տաք, իսկ դուք մի ուրիշ աղբիւրի վրայ գնաք:

— Այդ խելքն ո՞վ սովորեցրեց ձեզ, ասաց Վահանը: Աղբիւրը ո՞չ իմ հօր շինածն է, ո՞չ քո հօր, — Աստուծոյ աղբիւրն է, ով շուտ հասնի՝ նրանն է: Բանի որ մենք ձեզանից շուտ ենք

*) «Միլլաթ - բաշու» նշանակում է աղբապետ, աղբի գլխաւոր: Հին ժամանակներում՝ սահմանադրութիւնից առաջ՝ սա ընտրւում էր հայերից, որի պարտականութիւնն էր պաշտպանել համազգէններին դիւանատներում և հողատանէլ աղբային ու եկեղեցական գործերի վրայ:

եկել՝ ուրեմն մերն է. էլ ինչո՞ւ պէտք է մենք վեր կենանք՝ դուք նստեք: Վամենաք աղբիւրի գլխի դուզը մեզ, իսկ դուք քիչ հեռու նրստեցէք, ձեր քէֆն արէք. չէք կամենալ՝ գնացէք ձեզ համար աղբիւր գտէք:

— Վահ, ասաց Սօսընը բարկացած, մեզ համար ամօթ չէ՞, որ Հայերը այստեղ պատրաստի նստեն, իսկ մենք գնանք նոր աղբիւր որոնելու: Ձէ՛, անպատճառ պէտք է վեր կենաք, թէ չէ՛ վերջը վատ կլլինի . . . Խօսակցութիւնը վերջացաւ նրանով, որ իւրաքանչիւր խմբից մի քանի հոգի մէկ-մէկ դուրս բերեն մենամարտել տան, որ խուճբը յաղթող հանգիստանայ՝ աղբիւրը նրանց լինի:

— Եթէ այդպէս է, Սօսըն, ասաց Վահանը վեհանձնութեամբ, — ես ու դու լաւ ենք իրար պատահել. թող մեր տղէրքը մի կողմ կանգնեն, ձերը՝ միւս, իսկ ես ու դու մենամարտենք. կամենաս՝ գօտեմարտ, կամենաս՝ փէտակուիւ, մեզանից որըս յաղթի՝ աղբիւրը նրանց լինի:

— Լաւ ես ասում, Վահան, ասաց Սօսընը՝ ոչ սակաւ հպարտութեամբ, — թէեւ ես դրան ՚ի սրտէ համաձայն եմ, բայց մեր տղէրանց բնութիւնը գիտեմ, եթէ մէկը ինձ մի փայտ խրելու լինի, նրանց սիրտը չի համբերիլ,

անմիջապէս մէջ կընկնին եւ կռիւր կըմեծանայ: Աւելի լաւ է ուրիշներին դուրս բերենք, իսկ մենք հսկենք, որ անկարգութիւն չըլլինի:

Վահանը ճարահատեալ համաձայնեց:

— Ահմէ, դուրս արի՛, ձայն տըւեց Սօսընը: Իսկոյն մի 16 տարեկան լամուկ հպարտ-հպարտ դուրս եկաւ փայտը խաղացնելով եւ գոռաց.

— Թո՛ղ դուրս գայ Օհանը:

— Սյդ ի՛նչպէս կարելի է, մէջ մտաւ Վահանը, — մի ահագին մարդ դուրս է եկել եւ հրաւիրում է 10—11 տարեկան երեխի:

— Ինչո՞ւ երեխայ, ասաց Սօսընը, — դա էլ սրա հասակի տղայ է. թէ վախենում էք եւ պատճառ բռնում, սոյն ասեցէք:

— Ի՞նչու եմ գալիս, դուրս, — վրայ բերեց Օհանը պատանեկական պարծենկոտութեամբ:

— Վահան ջան, թող, եթէ ինձ յաղթի էլ՝ վնաս չունի, միայն թէ թող չասեն Հայերը վախեցան եւ պատճառ բռնեցին:

Ամենքը հեռու քաշւեցին: Թուրքը հպարտ հպարտ մի քանի պտոյտ արեց Օհանի շուրջը: Սյդ միջոցին Օհանը մի փայտ իջեցրեց նրա թիկունքին: Թուրքը յետ դառնալով՝ փայտը վրայ բերեց նրա գլխին, բայց Օհանը փոքր ինչ յետ քաշւելով, կրկին մի փայտ իջեցրեց թուրքի գլխին: Օհանը դեռ երեխայ էր, թէպէտ ճարպի-

կութիւնն ունէր, բայց հարւածը թոյլ էր, չէր ներգործում աժդահայ լամկի վրայ: Թուրքը որ բարկացած մի փայտ էլ իջեցրեց Օհանի գլխին՝ խեղճ երեխի աչքերը մթնեց, եւ այն է գետին կը գլորւէր, եթէ Վահանը ձեռքից չը բռնէր եւ դուրս քաշէր ասպարէզից:

Թուրքերը ուրախութեան աղաղակներ բարձրացրին, կարծես մի մեծ յաղթութիւն արած լինին:

Բարխօն *) որ մեր ընկերակիցներից էր եւ մի քաջաուող յատանի, բարկացած այդ իրողութեան վրայ, թեւերը քշտեց եւ ասպարէզ դուրս եկաւ աղաղակելով. — Մարդ ու մարդ անայ դուրս եմ գալիս, որըդ ձեզանից կամենայ թող դուրս գայ. ո՛չ թէ ձեզ նման նամարդ, որ մի ահագին մարդ դուրս եկաւ եւ կանչեց երեկայ երեխին: Գուրս եկէք որըդ ուզում է լինի . . . Մի փոքր լուծութիւն տիրեց լամուկների մէջ. իրար երեսի նայեցին եւ վերջապէս Ահմադէ՛ Փօտուենց Գուրբիսը **), որ նրանց մէջ յայտնի էր իր քաջութեամբ՝ ամօթից ստիպւեց դուրս գալ:

— Իմ անունը գառ, քո անունը գայլ, ասաց Բարխօն, տեսնենք Աստուած ումը կը յաջողի:

*) Բարիս քիւրդերէն նշան. — գառ, բարեօ — գառնեկ:

**) Գուր — գայլ, գուրբիս — գայլախեղդ (գայլ խեղդող):

Ասաց ու մի փայտ իջեցրեց լամկին. լամուկը իր փայտը դէմ տալով՝ մի հարւած իջեցրեց նրա ուսին. մին էլ վրայ բերեց, բայց Բարխօն իր փայտին հորիզոնական դիրք տալով այնպէս խբեց նրա փայտին, որ լամկի ձեռքից փայտը թռաւ. վրայ-վրայ որ երկու հարւած էլ տրւեց, լամուկը մի քանի անգամ սլորտուեց ու թըրըմիալով գլորւեց գետին: Լամուկները՝ բարկացած՝ շրջապատեցին Բարխօնն եւ սկսեցին խբել:

— Տղէրք, սկսեցէք, — գոռաց Վահանը, եւ կայծակի արագութեամբ մէջ ընկաւ: Բոլորս միասին վրայ տըւինք: Առին սկսեց:

Վահանն ու Բարխօն առիւծի պէս ընկել էին լամուկների մէջ: Որ կողմը որ շուռ էին գալիս, արենլը՛իկ էին անում: Տաճկի լիլոգ գլուխ էր, որ կոտորում էր լակ դգմի պէս: Դեռ կռիւն սկսելուց առաջ՝ Վահանը մեզ պատւիրել էր, որ եթէ վէճ պատահի, մեզմ վրւենք, որովհետեւ Սօսընը «մըէյուլմի» (դատարի) որդին էր. ուստի մենք խնայում էինք: Բայց մին էլ այն նկատեցինք, որ լամուկները դաշոյններ են դուրս հանել:

— Տղէրք, էլ մի խնայէք, դօ վրանը մերն է, — գոռաց Վահանը:

Մի քանի տուր ու դմիոց էլ՝ եւ լամուկները

սկսան փախչիլ: Բաւականին տեղ նրանց հա-
լածելուց յետոյ՝ մենք ուրախ ուրախ վերա-
դարձանք Արշ-աղբիւր: Ուրախ էինք, որով-
հետեւ շատ քիչ էր պատահել մեզ այսպէս խմբո-
ւիլն սօր գուրս գալ եւ յաղթող հանգիտանալ:
Մեր փնջերը դարձեալ ցցւած էին իրանց
տեղերը. մեզնից ամեն մէկը նստեց իր փնջի
մօտ, իսկ փոքրերից երկու-երեք հոգի սկսան
սփռոյ փռել կանաչ մարգագետնի յորայ եւ
սեղան պատրաստել: Նահապետական ձեւով
շարւած մեր ճոխ սեղանի շուրջը՝ կերանք ու
աղբիւրի անուշ ջուրը խմեցինք. եւ երբ արե-
գակը թեքւել էր դէպի իր երեկոցեան հան-
գըստարանը՝ պատրաստեցինք ճանապարհ ընկ-
նելու դէպի քաղաք:

Վահանն սկսած փոքրերից՝ բոլորիս զոյգ-
զոյգ կանգնացրեց. հրամայեց ծաղկի փունջը ձախ
ձեռքներիս բռնենք, իսկ փայտը աջ ձեռքներովս
դնենք ուռներիս: Բարխօն էլ մի կանաչ-կար-
միր թաշկլնակ կապած իր փայտի ծայրից,
դրած ուսին, որ դրօշակի նման քամին փրո-
փրոսցնում էր, կանգնեց առաջին զոյգի կող-
քին՝ ուղեկցելու համար: Վահանն էլ փայտը
դրեց ուսին, կանգնեց մեր կողքին եւ հրա-
մայեց առաջ գնալ: Ճանապարհին երբեմն

ինքն էր երգում, երբեմն մեզ էր երգել
տալիս:

Այսպէս խմբովին՝ նախ իջանք Գետ-Վար-
դանայ ձորը, մին էլ համբուրեցինք մեծ աղ-
բիւրի քարը, եւ լացւելով՝ շարունակեցինք
ճանապարհներս:

Իջանք Ենգօ-ափօի ելից (զառիվայր է)
եւ այն է պիտի մտնէինք Խաղնադարենց մահ-
լէն, (ուր գլխաւորապէս գտնուում են տաճիկ-
ները), որ Վահանը հրամայեց երգել «Հայրե-
նասէր Արամեանք»:

Տաճիկ լամուկները հաւաքւած կտրներին,
լուռ, աչքները չուած, նայում էին մեր խմբին:

— Տղէրք, ասաց Վահանը, — «Իեւին դը-
ժոխք որ ցոյց չըտաս, չի գիտե՞նայ արքայու-
թիւնն ինչ բան է» . . . ճիշտ է ասած այս
առածը: Տեսնո՞ւմ էք, եթէ այսօր մենք դրանց
օհոիցը չըգայինք, հիմա այստեղ մեզ քա ր ա-
լ ե ի կանէին (կըքարկոծէին): Տեսէք ինչ խեղճ
խեղճ, գառի նման կանգնել են կտրներին եւ
նայում: Այս լաւ օրինակ է մեզ, քանի խեղճ
մնանք՝ գլխներիս չը ք Տ Ք Ե ն . . . լաւ է հի-
միկանից մենք դրանց գմիկենք, որ մեծանանք,
չլի դմիտղը մենք լինինք . . .

Այսպէս ուրախ աղաղակներով հասանք

Ազգիգեօւայ մահէն, եւ որովհետեւ ճրագ-
ները վառելու ժամանակ էր, իրար մնաք բարով
ասացինք եւ ցրեցանք մեր տները հանգստա-
նալու, մի եւ նոյն ժամանակ խոստանալով, որ
վաղը միասին գնանք Չանգիզօրայ դուզը թա-
մաշա, որովհետեւ ամեն տարի այդ օրը այն-
տեղ ջրերեալ էր լինում:



Գ.

Թ Օ Ռ Ո Ւ Ն Ե Ն Ք



րկչներ գերեզմանատան ներ-
քեւ՝ Չանգիզօրայ դուզումը մեծ
հանգէս կար. ջահէլ տղէրքը
ձիանքը հեծած՝ արդէն գնացել
էին այնտեղ ջրիդ խաղալու:
Խուռն բազմութիւն գիմում էր

հանգիսին ներկայ գտնւելու: Մենք էլ ընկեր-
ներով արդէն սրատրաստուել էինք որ գնանք:

— Տղէրք, գիտէք ինչ կայ, ասաց Վահանը,
— երեկ գիշեր Թօռուենց Գօլլաթն ինձ կան-
չել էր, գնացի խնդրեց՝ որ հանգիսի ժամա-
նակ մենք ընկերներով կանանց խմբից չըհեռա-
նանք, նրանց չորս կողմը կանգնած, այնտեղից
թ ա մ ա շ անենք: Ասում էր՝ մուղաթ կացէք
լամուկ, բան օղլուշաղին (կանանցը) չըգիպ-

չեն. եթէ բան կրպատահի . . . անմիջապէս մեզ
իմաց արէք: Դօւլլաթն ինձ հազարէն մի բան
ասի՝ մերժեմ. խօսք եմ տըւել, պիտի կատարենք:

Բոլորս էլ համաձայնեցինք, որովհետեւ
խօսքը ընդհանրութեան վրայ էր, բոլորիս
տանեցիքն էլ այնտեղ կըլլինէին:

Սովորականին պէս զոյգ-զոյգ կանգնեցինք
եւ քաղաքից դուրս գալով՝ սկսեցինք «Ողջոյն
տըւէք իմ Հայրենեաց» երգը, որ պատուելու
(Սեղբակեանի) աշակերտներից էինք սովորել:
Այս անգամ մենք աւելի ուրախ էինք, ամեն-
քիս երեսին էլ երեւում էր նոյն ուրախ ժպիտը,
— երեւի նրանից, որ մեզ մարդատեղ դրին,
կանանց պահպանութիւնը յանձնեցին մեզ:
«Դուցէ երեկան յաղթութիւնից էր, որ մեզ
նշանակութիւն տըւին», փսփսում էինք իրար:

Հասանք Փրկչները: Ումը կորցրել էիր,
գայիր այնտեղ՝ կըգտնէիր: Հայ, թուրք, քուրդ,
մեծ, փոքր, տղայ, աղջիկ, բոլորն էլ եկել էին:

Ձահել տղերքը հեծած ամբողջ ձմեռը
խամ պահած խնձորի պէս ձիանքը, ուստ
ու ուրջմի*) մէջ կորած, տէրտէրի կամ մօլլի
գրած թուղթն էլ կրծքին քաշ արած, այս ու
այն կողմն էին քշում, խամից հանում, մինչեւ
հանդէսի սկսւիլը:

*) Ձիան գաղղարանք է:

Մինչ դրանք իրանց քեփին էին, փոքր ինչ
բարձր, գերեզմանատանը, կանայք շրջապա-
տած իրանց հանգուցեալների դամբարանները,
ողբում էին սիրելիների կորուստը: Տէր-Յակոբն
ու Տէր-Ստեփանն իրանց տիրացուներով՝ շուր-
ջառն ուսներին «Ի վերին Երուսաղէմ» էին
երգում: Ձահել աղջկերքն էլ իրանց մայրերի
կողքին կանգնած, թաշկինակները ձեռքներին,
մերթ աչքներն էին սրբում, եւ մերթ աչքի
տակով նայում դէպի փոքր ինչ ցած ձիաւոր
երիտասարդներին:

Տէրտէրները վերջացրել էին իրանց գե-
րեզմանօրհնէքը եւ կանայքը իրանց ողբը, որ
սկսւեց կանոնաւոր ջրիգը: Թմբուկն ու զուռ-
նէքն ածեցին: Մօտ քառասուն ձիաւոր կանգ-
նեցին մի կողմը, եւ քառասուն նրանց հա-
կառակ կողմը, իրար հանդէպ՝ մէջ տեղը բա-
ւականին տարածութիւն: Ձիաւորները խառն
էին առանց խտրութեան՝ Հայ եւ թուրք:
Սկսեցին ձիանքը արագ վազեցնել եւ ջրիգը
ուղղել շեշտակի իրար վրայ, որը որին առա-
ջուց խօսք էր տըւել, — առանց իրար հետ ոխա-
կալութեան: Թուրք ու Հայ կարծես այսօր եղ-
բայր էին դառել, իրար հետ ջան դուրբան
ասելով մրցում էին:

Թուրք երիտասարդները նայում էին հան-

գիտականների մէջ եղած զի գէքին (Թուրք աղջկերքին), Հայ երիտասարդներն էլ Հայ աղջիկներին, որոնք գերեզմանատան բլրակից նայում էին իրանց. է շխի էին ընկնում: Երիտասարդները աշխուժի գալով, աւելի էին ձեւեր գործ դնում.— ձիու չափ ընկած ժամանակ կռանում էին գետնից քար կամ մի ուրիշ ջրիդ վերցնում, մի ոտը դնում ձիու գաւակը եւ հակառակորդի հետ չափ գցում, շնորհքը ցոյց տալիս: Գնացին ու եկան, թող ու դումանը երկինք հանեցին:

Այդ հանգիսի մէջ ամենից աւելի սչքի էր ընկնում մի տաճիկ երեսասարգ: Նրա ալ նժոյգ ձին կարծես ուզում էր ամպերի հետ խաղալ: Կանգնած ժամանակ խրինջում էր, փէսլ անում (ոտքերով գետինը քանդում) եւ ուզում անպատճառ վազել. իսկ վազելու ժամանակ նրա ետեւից հասնող ձի չրկար: Ինչ ձիաւորի ետեւից որ ընկնում էր՝ իսկոյն ձեռքով ֆէսը գլխից թռցնում էր եւ առաջ անցնում:— Սա Մահմադ-բէգն էր, Սուլէյման աղի տղէն, մի բոյսով-բուսաթով երիտասարդ, որ յայտնի էր եւ իր ազնուութեամբ:

Ջրիգի տաք ժամանակ՝ լաւեց, թէ Թօռունենց տղէրքը գալիս են: Մուսացւեց հան-

դէսը, ջրիգւորներն էլ ձիանքը կանգնեցրին հանգստացնելու մինչեւ նրանց գալը:

Երեւացին նրանք. թըւով տասը ձիաւոր, տասն էլ միանման հագնւած եւ միանման մոզրախները ձեռքներին: Բոլորի նիզակների գլխին էլ կար դեղին թիթեղից թօփոռ (գունդ)՝ կարմիր ու կանաչ մետաքսեայ փունջերը կախ: Բոլորի ձիանքն էլ միանման զարգարւած էին:

Իրանք Օհան պապոնք էին, որ կրում էին Թօռուն (աղնրւական) մականունը:— Օհան պապն էր, իր տղէն եւ ութ թոռները, որոնցից մէկն էր միայն 10—12 տարեկան, իսկ միւսներն արդէն հասած:

Օհան պապը թէպէտ եօթանասուն տարեկան մի ալեգարդ ճերուհի էր, բայց չէր կորցրել իր երիտասարդական աշխոյժութիւնը: Մինչ դեռ նրա հասակակիցները գաւազաններով հազիւ էին կարողոնում ամբամբալ, նրան ամեն առաւօտ կարելի էր տեսնել կուժը ձեռքին, աղբիւրից վերադառնալիս կամ եկեղեցու դարովէրից ցած իջնելիս: Ամեն առաւօտ, դեռ բոլոր խանութները կողպած, կարելի էր նրան տեսնել խանութը բացած, դռան առաջը ջուր շաղ տւած, ալսած (չընայած որ այդ աշակերտների գործն էր), եւ ճալպատակ

նստած դազգահի առաջ, մատնոցը մատին, ասեղը ձեռքին՝ կապոյտ մահուդ չուխի օձիք կամ կուրծք ոսկեթելերով նախշելիս: Եւ եթէ մէկը նրան հարցնելու լինէր. «Ուստա-Յհան, ինչո՞ւ ես խանութիւ պոլսէս շուտ բաց անում, չես սպասում մինչեւ աշակերտներդ գան բաց անեն, ալ են, յետոյ դու գաս»: Նա հանդարտութեամբ կը պատասխանէր. «Գիտե՞ս, որդիս, եղբայրս, Ստուծոյ դիւան-դարգեահը առաւօտեսն արշալոյսին է միայն բաց լինում: ով որ այդ ժամանակ իր գործին կը լինի, իր արդար աշխատանքին, ճակատի աղնիւքը տընքին՝ նրա գործը կը յաջողի. խակ ով որ կըքնի մինչեւ ճաշ, ոչ եկեղեցի կը գնայ, ոչ իր ընտանիքի վրայ կը մտածի, Ստուծոյ դիւան-դարգեահն էլ նրա առաջին կողպած կը լինի»...

Նրանք լաւ աշխատասէր էին, եւ մի եւ նոյն ժամանակ լաւ ուտող-խմող, հագնող եւ լաւ քեփ անող. որտեղ մի ուրախութիւն, մի ուխտագնացութիւն լինէր՝ նա իր որդով, թոռներով եւ հինգ հարսներով այնտեղ էր: Հարսանքասներում կարելի էր այդ ծերունուն տեսնել՝ կարմիր աղուխը ձեռքն առած, գեօլն դի (պար է) գլուխն անցած Գեօլնդէսի:

Այդ նահապետական ընտանիքը բաղկացած էր 20—25 հոգուց, որի գլխաւորը Յհան

պապն էր: Բոլորը պարտաւոր էին նրա խօսքովը շարժուել — առանց նրա գիտութեան ոչ մի գործ չը բռնէի: Ընտանիքի բոլոր անդամները ամեն երեկոյ պարտաւոր էին ծերունի պապին հաշիւ տալ, իրանց խանութներում արած առեւտուրի մասին: Այսպիսի մի խաղաղ ընտանիք էին կազմում Թօռունները:

Երբ սրանք մօտեցան ջրիգւորներին, Օհան պապը բոլորին թամանդա արեց (բարեւեց): Ամենքը պատկառանքով ընդունեցին նրա բարեւը եւ հրաւիրեցին ասպարէզ: Նա դարձաւ դէպի իր թոռները. «Որդիք, ձեզ տեսնեմ, իմ տան անունը չ'արատաւորէք, ցոյց տըռէք ժողովրդին, որ դուք իրաւ արժանի էք Թօռուն կոչուելուն: Գէ՛, առաջ ես եմ մէյ դան դուրս գալիս, ո՞վ ուզում է՝ թող գայ»: Այս ասաց ծերունին եւ մղրախը խաղացնելով ձիւ գլուխը բաց թողեց: Երիտասարդ ձիււորները եւ հանդիսականները ծիծաղեցին. բայց նրան պատելու համար՝ ոչ ոք դուրս չեկաւ, իբր նրա հետ մրցող չկայ:

Վերադարձաւ նա ուրախ ժպիտը երեսին, եւ թոռների ձեռքից մղրախներն առնելով, մի-մի ջրիգ տըռեց եւ փոքր թոռի հետ մի կողմ քաշուելով, իրաւունք տըռեց միւսներին ասպարէզ դուրս գալու:

Թմբուկներն ածեցին, նորից ջրիզն սկսեց: Գնացին ու եկան, նա սրան, սա նրան. ջրիզ էր որ իրար քամակից գնում էր: Մահմադ-բէգը այժմ կորցրել էր իր նշանակութիւնը. հիմա աւելի աչքի էր ընկնում մի ուրիշ երիտասարդ, որ գլխին ծածկած ունէր սպիտակ * օ լ օ Գ, գոյնդգոյն եազմէքով փաթաթած, կապոյտ չուխա-չարքեազով, դէմքը սեւ-գեղ-նագոյն, արծաթթով եւ մի փոքր ծուռ աչքերով, բոզ ձին տակին. թ լ ի ս մ է ք ը կա-նաչ կաշու մէջ կարած՝ օրօճիկները (մանր խխուռնիների խեցի) շուրջը, ձիու կրծքին:

Սա Յոսան պապի միջնեկ թոռն էր— Գօլլաթը: Մէկ այն էինք տեսնում, որ ձիուն մտրակում էր, էլ չէր երեւում, թող ու դու-մանի մէջ կորչում էր. մէկ էլ տեսնում էինք հրէս ձին չափ գցած, ինքն էլ փորի տակն ընկած կամ չըբած թամբի վրայ գալիս է: Թէպէտ Մահմադ բէգն էլ պահաս չէր, բայց վաղուց նա Գօլլաթի հետ եղբայր էր դառել, իրար հետ չէին մրցում:

Սրեգակը թեքել էր, որ հանդէսը վերջա-ցաւ: Բոլոր ջրիզ-տորները հաւաքւեցին, Յոսան պա-պին առաջնորդ կարգելով՝ գցեցին առաջները, իրանք էլ նրա քամակից գտակները թեք դրած, հաղ կանչելով, քեփ անելով դարձան դէպի փուն:

Մենք էլ՝ ինչպէս մեզ յանձնարարւած էր, երգելով, ուրախութիւն անելով հետեւում էինք կանանց. որոնք խումբ-խումբ, կապոյտ ջ ու բ-բ է ք ը (վերնագգեստ) հագած, կարմիր գոգ-նոցով, կապոյտ կրծկալով, կարմիր Կի-Վի-Կ գլխներին ծածկած, կանաչ քօշերը ոտքներին, իրար հետ անուշ-անուշ խօսելով, մէկը իր տղին, միւսը իր փեսին գովաբանելով, դիմե-ցին Թաքեար-դաղի ստորոտը եղած սուրբ Սի-մօնը *) համբուրելու:

Աղջիկըքն էլ մայրերի առաջն ընկած, կարմիր ֆէսերը գլխներին, մազերը 20 - 25 փոքրիկ հուս արած՝ մարջաններով եւ արծա-թէ յուլունքներով իրար կցած ու ծածկած ողջ թիկունքը, մի շար ոսկի կապած ճնօտների տակ—այս ականջից այն ականջը, հէքեա-լը **) արծաթէ շղթայով կախած կրծքներին, կարմիր չիթ մինթանով, խումբ-խումբ իրար ձեռք բռնած, ցածր լէ-լէ ասելով, ծաղիկներ քաղելով առաջ էին գնում:

— Աղջիկներ, տեսնա՞ք Վարդանը ինչպէս էր ձին խաղացնում:

— Ապա Սարգէլ՝ սը:

*) Մի քարքարոտ տեղ է, ուր մի մեծ քար կայ. ա-սում են նրա տակն է թաղւած Սիմօն անուն ձգնաւորը:

**) Եւանգիլիսի արծաթեայ դարդ է:

— Ապա Մարգարէն:

— Ես գիտեմ, Դօւլլաթին էին բարկացնում:

— Դու ու քո Դօւլլաթը, ասաց մի հասակն առած աղջիկ, — աչքերի մէկը նայում էր Մասիս, միւսը Սիփան սար:

— Բաղդաւոր . . . քո խնքոտ Սահակի չափ էլ չլիւր. տեսար նրա հետ մէյդան դուրս եկող չեղաւ:

— Դէ լաւ, Ալմաստ, հանաք եմ անում. կամ թէ քեզ ի՞նչ, մի տեսնա էլ քեզ սիրո՞ւմ է, որ դու նրա համար լիճնում ես:

— Թող քեզ սիրի. . . ասաց կարմրելով Ալմաստը: Խեղճ աղջիկը աշխատում էր հաւատացնել, որ Դօւլլաթին չի սիրում, բայց գաղտնիքն իմացուեց:

— Ալմաստ, ի՞նչ էք լիճնում, ուրախութեան օր է, լէ-լէ, Մարօ կամ մի ուրիշ հաղասելով գնանք: Վարդխաթուն, ի՞նչ ես մոռութդ կախել (տխրել):

— Դուք ասացէք, ձայնս չի գալիս:

— Ասա՛ թէ քո եղբօր արեւը սիրում ես: Նա սկսեց.

Էս ի՞նչ բան էր՝ դուշմանն արաւ,

Ի՞նչ դուման էր գլխիս բերաւ,

Փաշէն եարիս բռնեց տարաւ,
Յէտեւից յիշկելով¹⁾ մացի²⁾:

Հէլա³⁾ ես էլ կայնայ տանիս⁴⁾,

Սրի կրակ գցի ջանիս,

Կանչեմ՝ սաքիբ⁵⁾, դու քրքրուիս,

Խիալով⁶⁾ դարդերով մացի:

Հէլա տէսայ դուար բուք էր,

Էս իրեք օրն ընձի սուգ էր,

Եարաբ⁷⁾ կըլնի եարս դուս գէր,

Լալիւլ ես ֆիրզան⁸⁾ մացի . . .

Վարդխաթուն, Ասուած սիրես մի լէ-լէ ասա, այդ հաղը այսօրւան յարմար հաղ չէ:

Վարդխաթունը փոխեց հաղը, ընկերներն էլ ձայնակցեցին նրան:

Հասան սուրբ Սիմօն: Դու արի ու տես, թէ պառաւաններն ինչպէս են երեսները քսում չոր քարերին եւ ջերմեռանդ աղօթք անում, ինչպէս քարի տակից հանում են հողն ու գրցում բերսնները, ծուներ դնում, մոմ վառում, արիւն-արտասունք թափում, չոր քարերից իրանց մեղքերին թողութիւն խնդրում:

Եկեղեցուց դուրս էին եկել, որ հասանք քաղաք եւ ամեն մարդ գնաց իրանց տուն:

1) Նայելով: 2) Մնացի: 3) Բարձրացաւ: 4) Կտուր: 5) Պատճառ եղող: 6) Մտածելով: 7) Արդեօք: 8) Փախաղով:

Երեքշաբթի՝ Զատիկի երրորդ օրն էր:

Բոլոր աշակերտներս վաղ վեր էինք կացել եւ հաւաքել ուսումնարան: Աղօթքից յետոյ՝ վարժապետը նախ քան դասեր հարցնելը, հրամայեց խալֆին «Փալախան» պատից ցած բերել: Բոլորիս սրտերը դող ընկաւ . . .

—Որ ասում եմ՝ ինչ որ դուք դուրսն անէք, ես այստեղ նստած կարող եմ իմանալ, սուսց Լթօն հպարտութեամբ. —բաւական է, որ «Սօղօմօնուս» թերթերից երկուսը շուռ ու մուռ տամ, կիմանամ թէ ձեզանից իւրաքանչիւրը դուրսն ի՞նչ է անում: Եւ ահա այսօր խօսքս հաստատելու համար՝ դուրս եմ կանչում երեկայ բոլոր չարութիւն անողներին . . . Սկսեց մէկ-մէկ կարգալ մեր այն ընկերների անունները, որոնք Ղըշ-աղբիւրումն էին եղել: Ս.մեն մէկի ոտներին ճիպոտի մի քանի հարւած տալով՝ հրամայում էր չարութիւն չանել: Բայց թէ ի՞նչ չարութիւն, —այդ մասին ոչինչ չէր ասում:

—Քեալաշ, մօտ արի, ձայն տըւեց նա:

Ես սովորականին պէս ձեռքերս կրծքիս գրած, մօտեցայ:

—Պարկիր եւ ոտներդ անց կացրու «Փալախայի» մէջ. այսօրւայ փալախայից դու եւս պէտք է մասն ունենաս:

—Ինչո՞ւ, վարժապետ, ի՞նչ եմ արել:

—Քեզ ի՞նչ որ հրամայում են՝ կատարիր, ուրիշ ոչինչ:

—Սխրը ի՞նչ մեզ ունիմ, վարժ . . .

—Լռիր, անպիտան, դեռ համարձակում ես խօսել. բաւական չէ «մայթաբ»-ի աշակերտների հետ կռւելը, կամենում ես ինձ հետ էլ կռւել . . .

Վահանը՝ որ մինչեւ այդ ժամանակ գործին անտեղեակ էր, կարծում էր թէ՛ վարժապետը ուրիշ չարութեան համար է ծեծում, երբ այդ իմացաւ, յառաջ եկաւ եւ ասաց.

—Ինչո՞ւ համար էք ծեծում, վարժապետ:

—Սյդ քո գործը չէ՛, ասաց Լրթօն բարկացած. —քեզ «խալֆայ» եմ կարգել, որ սրանց խրատես չարութիւն չանեն, դու աւելի ես գլխահան անում . . . Ես դրա համար կըզանգատուեմ հօրդ—աղային: Ինչո՞ւ ես սրանց սովորեցրել, որ «մայթաբ»-ի աշակերտներին ծեծեն:

—Բա մեզ պաշտպանելու իրաւունք չունինք, երբ գալիս են մեզ կողոպտելու . . .

—Դուք որ խելօք կենաք, նրանք ձեզ ոչինչ չեն ասիլ: Դուք էք մեղաւոր . . .

—Ձեր կարծիքով . . .

—Դուրս կորիր, յիմար. այս բոլորին լըր-

բացնողը դու ես: Սեգրակեանի աշակերտը
չե՛ս, ի՛նչ պէտք է լինիս:

— Սեգրակեանին չես հաւանում, տօ Լըթօ:

— Քեզ ասում եմ դուրս կորիր: Մէկ ու-
ղում էր տեղից վեր կենալ, մէկ էլ չէր հա-
մարձակում, որովհետեւ ծանօթ էր Վահանի
քաջութեանը:


— Վաշառակեր անպիտան, ասաց Վահանը
եւ մեզ աչքով անելով դուրս գնաց:

Ես, Սուրէնը եւ Զօհրաբը հետեւեցինք
նրա օրինակին. գրքերը տըւինք կոնատակներս
եւ պճւկ—դէպի դուրս: Վարժապետը մեծ աշա-
կերտներից մի քանիսին հրամայեց, որ մեզ
բռնեն. բայց մենք արդէն մեր տներումն էինք:



Դ.

ՂԸԶԸԼ-ԳՍՂ ԿՍՄ ԿԱՐՄԻՐ-ՍՍՐ



Լսումնա-

րանից փախ-

չելու յաջորդ օրը,
առաւօտեան վաղ

վերկացայ, դեռ բոլոր տանեցիք քնած՝ մտայ մա-
ռանը: Մինչեւ հիմա դեռ չեմ մոռացել, թէ
ինչպէս այնտեղ ամեն բան կարգին գրած
էին իրանց տեղերը: — Վարմիր հողէ տաշտերը
կաթով լիքը՝ շարւած էին արեւմտեան պատի
երկայնութեամբ, որոնց երեսին բռնել էր մի
մասնաշափ սեր, դեղին սաթի գոյնով: Հիւ-

սիսային պատի երկայնութեամբ շարւած էին մաճնի կճուճները, որոնց բերանները ծածկուած էին կաւէ խուփերով: Սիւնից կապած էր լեօծանի*) բերանը, որ դրած էր սիւնի տակը. նրա մէջն էր լցնում մայրս մեր ամեն օրւայ մաճնի, կաթի, կարագի եւ սերի մի մասը, որ աշնան այդ խառնուրդից պատրաստէր այն համեղ ուտելիքը, որ կոչուում է «*սոսնի*»։ Պատին ցցւած էին մի քանի ճիւղտոններ, որոնց վրայ մայրս փռել էր անցեալ օրւայ տաքացրած կաթի սերը, չորացնելու համար: Մի անկիւնում դրած էր մի մեծ կարաս, որի մէջ աճուում էր ամեն օրւայ աղ արած կարագը: Կարասներով պանիրներին, տկերով մծթալներին, կրճուճներով հալած իւղերին հօ հաշիւ չըկար:

Մտնելով այնտեղ՝ հացի ահագին արկղից երկու լօջ դուրս հանեցի, մաճնի երեսն էլ քաշեցի մի կաւէ քեօսի մէջ, մի կտոր անաղ կարագ մանրեցի մէջը, մի քիչ էլ կաթի սեր լցրի, լօջը բրդեցի, գդալն առայ, քըրդէ վարի մի լաւ նախաճաշիկ արեցի: Յետոյ մի քիչ կարագ, մի քանի թերթ էլ չորացրած սեր փաթաթելով երկու լօջի մէջ,

*) Տիկ է, որ երեք օր գըւելով թանի մէջ է երեք օր ալիւրի թերթի մէջ, մաքրուում է՝ ստանում սպիտակ պաստառի դոյն:

դրի գրպանս ու եսլլահ—դէպի Վահանենց տուն: Չըմոռացայ գրքերիս պայուսակը թախկացնել խոտի դէզի մէջ, որ հայրս չըտեսնի ու իմանայ որ ուամնարան չեմ գնացել:

Հասնելով նրանց դուռը, երեք անգամ շվշվոցիս վրայ դուրս թռաւ նա:

— Բարի լոյս, Վահան. երեկ վարժատանից փախչելիս ասացիր, որ այսօր գամ քեզ մօտ, գնանք Սուրէնին ու Զօհրաբին էլ վերցնենք, փախչենք գնանք, մինչեւ երեկոյ չերեւանք. ո՛ր ես ուզում փախչենք: Ի՛հ, շո՛ւտ, թէ չէ՝ հիմա աշակերտները կըհաւաքւին ուսումնարան, Լթօն կուղարկի հայրերիս իմաց կրտայ, կըգան, կըբռնեն մեզ եւ ստիպմամբ կըտանեն էլի այն «գժոխքը» . . .

— Աստուծոյ բարին, Գեալաշ, ասաց նա հանդարտութեամբ, — ի՛նչ է, փախնում ե՛ս:

— Ո՛ր ես ուզում գնանք, այն ասա:

— Կաց որ ասեմ է: Երեկոյեան ժամկոչ Գեւօն եկաւ մեր տանից նշխարքի ալիւր տանելու. դռան առաջ ինձ տեսաւ եւ հարցրեց, թէ՛ ի՛նչու համար էին Սօսընն ու Բագօն ձեզանից գանգատուում: Ես հետաքրքրեցի: Նա պատմեց, որ՝ անցեալ երեկոյ ինքը գնացել է վարժատունն ապելու, տեսել է Սօսընն ու Բագօն վարժապետի մօտ նստած, մի փոքր

գլուխ շաքար էլ մէջտեղը: Միայն այսքան է լսել նրանց խօսակցութիւնից, որ Սօսրնն ասել է՝ ինչ որ ձեր աշակերտներն անում են, պատճառը Վահանն ու Քեալաշն են: Նրա ականջովն է ընկել եւ Արշ-աղբիւրի անունը: Քեալաշ, ես հաստատ գիտեմ, որ շաքարը նրանց բերածը կրկինէր՝ իբրեւ կաշառք: Սյն, նրանց արածն էր, որ Լթօն խեղճ երեխէքին ծեծեց: Քեալաշ, այսօր էլ նրանց «մայթաբին» տօն է, գիտեմ կրգնան Արղըլ-գաղ Լ * Ն * (ճաղիկ է) քաղելու. պէտք է մանգամ, գտնեմ ու վրէժս առնեմ: Էլի թող գնան վարժապետին կաշառեն:

Վարժապետ . . . Ա. փոսոս այդ անունը, որ նա կրում էր: Գնում էինք նրա մօտ, որ ուսում առնենք, կրթւենք, հասկանանք մեր չարն ու բարին . . . — նրանից սովորում էինք լիրբ-լիրբ խօսքեր. նրա ծեծով ստիպւում էինք ընկերին մատնել, որից յառաջանում էր ատելութիւն եւ ռիսակալութիւն: Բացի «Խոնարհեցո» եւ «Սպրեցո»-ից եթէ մէկը չորս-հինգ տարւայ աշակերտին հարցնէր՝ ո՞վ ես, ի՞նչ ազգից, ի՞նչպիսի մարդիկ են եղել քո պապերը, — չէր կարող մի խօսք անգամ պատասխանել: Էլ ի՞նչ ուսումնարան, մի անգամից ասէին «բանտ» կամ յիմարանոց՝ կը յարմարէր . . . Իեռ չեմ մոռացել այն խօսքերը, որ Վահանը մեծ ա-

խորժանքով կրկնում էր, թէ՛ ուսումնարան միայն կարելի է կոչել նրան, ուր սովորում է Ախմօենց Կակօն, այսինքն՝ Էջմիածնայ ձեմարանը: «Ա՛խ, երանի մենք էլ այնտեղի աշակերտ լինէինք», աւելացնում էր նա եւ յափշտակաժ պատմում Կակօի ասածները, թէ՛ ինչպիսի խելօք, ուումն առած վարժապետներ կան այնտեղ, ինչ գեղեցիկ դաս են աւանդում. պատմում են հին հին պատմութիւններից, թէ՛ այն ժամանակայ մարդիկ ինչ քաջ են եղել, ինչպիսի քաջութիւններ են արել, եւ էլի շատ շատ բաներ . . .

— Գնանք, Քեալաշ, գնանք Սուրէնին ու Զօհրաբին էլ վերցնենք, գնանք Արղըլ-Գաղ, նրանք անպատճառ այսօր կրգնան այնտեղ:

Չէ՛, յաւիտեան չեմ մոռանալ նրանց (լամուկների) արարմունքները: Սյնպէս էլ բան կրկինէր, չէինք կարողանում նրանց թաղից անց կենալ. մէկ էլ այն կրտսնէինք՝ ամեն կողմից վազում են դէպի մեզ, գոռալով. «Դ * Խ * Բ * Է * Լ * Ի * Ե * Ն *» (դէ՛ ձեզ կողոպտեցէք), այսինքն՝ գրպաններիդ իրերը հանեցէք եւ մեզ տըւէք: Մենք ընդդիմանում էինք. վէ՛ճ էր լինում, սկսում էինք իրար ծեծել. թէ՛ յաղթում էինք, գնում էին Լթօն կաշառում, նա էլ ոտքներս ձգում էր «Փալախայի» տակ . . .

Թէ չէինք ընդդիմանում, ինչ որ ունենում էինք գրականներումս, տալիս էինք՝ աւելի վատ, նրանք միշտ նախատում էին, թէ՛ Հայերը թոյլ են, վախկոտ են . . . Վայն եկել էր այն հայ տղին, որ մենակ գնար թուրքերի մահչէն. այնքան ծեծ կուտէր, որ չէր կարող իր ոտքով տուն վերադառնալ . . . Թէ նրանց մահչէն չըզընայինք, չէր լինի. ամեն առաւօտ՝ պէտք է մեզանից ամեն մէկը իրանց կովերը, էջերը տանէր նախրապանին յանձնէր. նախիրն էլ հաւաքւում էր . ք ե ո շ կ ե ր ը, ուր գնալու համար պէտք է անցնէինք թուրքերի մահչույր, ուրիշ ճանապարհ չըկար: Այսպիսով շարունակ պատահում էինք նրանց եւ վիճում:

Լամուկներին ծեծելու համար որ վարժապետը մեզ չարաչար պատժում էր եւ մենք գանգատւում էինք մեր ծնողաց, նրանք մի եւ նոյն բանն էին կրկնում, թէ. «Վարժապետը որ չըծեծի, աշակերտը մարդ չի դառնալ»: Նրանք էլ իրանց կողմից պնդում էին, թէ՛ չըպէտք է լամուկների հետ կռւել, ծեծել: Հազար էլ աշխատում էինք հաւատացնել, որ մենք չենք ծեծում, այլ պաշտպանւում ենք, նրանք չէին լսում, կրկնելով առաջին խօսքերը: Երբեմն՝ մինչեւ անգամ իրանք էլ էին պատժում . . .

Այդ միեւնոյն էր, թէ ասէին՝ գնացէք, ինչ որ ունէք՝ տրէք թուրքերի եւ քրդերի լամուկներին ու անամօթ վերադարձէք: Վայ «անթասիբութիւն» . . . վայ . . . Անասունը՝ որ անասուն է, մի երկու անգամ որ խբում ես, երրորդ անգամին՝ իր եղջիւրներով կամ աքացով պաշտպանւում է. բայց մենք . . .

Լամուկները մանկութիւնից սովորում էին ծեծել, ծեծւել, թալանել . . . որքան էլ թոյլ էին մեզանեց հոգով, այնուամենայնիւ քաջ էին հանդիսանում, որովհետեւ երկիւղ չունէին իրանց մեծերից: Եւ մինչեւ անգամ մեծերն էին նրանց սովորեցնում քաջ, անվախ լինել, որ մանկութիւնից այդպէս սովորելով՝ մեծանային էլ քաջ լինէին, նոյն սարսափը մեզ վրայ լինէր եւ այն ժամանակն էլ մենք նրանց «ստրուկը» լինէինք . . . Բայց մեր մեծերը այդպէս խրախուսելու փոխանակ, մեզ ծեծում, պատժում էին՝ երբ նրանց յաղթում եւ ծեծում էինք . . .

Ես ու Վահանը խօսելով գնում էինք դէպի Սուրէնենց տուն. տեսանք որ նա եւ Զօհրաբը գալիս են դէպի մեզ: Բարեւելուց յետոյ հարցրինք, թէ տանն ի՞նչ են ասել գրքերը չտանելու համար: Նրանք ասացին, որ

խաբել են, թէ՛ վարժապետը բոլոր աշակերտներին տանում է սարը զբօսներու:

— Սուրէն, ասաց Վահանը, մենք փայտներըս մոռանցանք տանը, գնա մի մի փայտ բեր, այսպէս առանց փայտի հօ չէնք գնալ: Ես երեկոյեան իմացայ, որ այն «լսկոտների» բանն էր, որ Լըթօն խեղճ երէխայոց ծեծեց: Վահանն սկսեց ժամկոչ Գեօից լրածները պատմել նրանց: — Այսօր էլ, աւելացրեց նա — այն սատանի լսկոտներին տօն է, գիտեմ կը գնան Արղը-Գաղ Բանամշա (կապտագոյն մի հոտաւէտ ծաղիկ է) քաղելու, պէտք է նրանց գտնեմ ու վրէժս առնեմ . . .

— Վայ գրանց քօքը ջնջըլի, ասաց Սուրէնը, — մարդիկը թասիբով են, թասիբով: Թէ ուժով կարողանում են՝ ծեծում են, թէ չէ՞ փողի զօռով հախներիցս գալիս են . . .

— Ս'եղ ասա, ասաց Վահանը, — Արշ-աղբիւրում որ բռնեցինք, ինչո՞ւ այնպէս չըծե՞ցեցինք, որ շալակած տուն տանէին:

— Կացէք գնամ փայտերը բերեմ, ասաց Սուրէնը: — Վահ, տղէրք տեսաք, հացն էլ էի մոռանում: մայրս երեկ մի հաւ իւզով տապալկեց, որ տանեմ սարը, իբր թէ վարժապետին տամ: Գնամ բերեմ:

— Օձի փուշն ուտի վարժապետը հա՛ . . .

Շուտով վերադարձաւ Սուրէնը, բերելով թէ հաւը եւ թէ փայտերը: Իսկոյն ձանապարհ ընկանք դէպի Արղը-Գաղի գագաթը:

Թէպէտ ես տանըհինգ տարեկան էի, բայց առաջին անգամն էր, որ տեսնում էի այդ սարի բարձրերը: Գոյնգոյն լալէքը, մոխրագոյն կակաչը, կապտագոյն բանամշէն, մանիշակագոյն բէյբօւնը, դեղին նարգիզը, եւ էլի հազարաւոր այսպիսի հոտաւէտ եւ գոյնգոյն ծաղիկներ խառնել էին իրար. կարծես մի գեղեցիկ գորգով ծածկած լինէր ողջ սարը: Ես մնացի հիացած:

— Տղէրք, ասաց Վահանը, — նայեցէք Մասիսի արեւելեան կողմը. տեսնո՞ւմ էք, որ մի կապոյտ գիծ է ձգւում: դա է Արաքս գետը: Մի անգամ վարժապետը չէր գնացել սրճարան, որ իմ «տաղարանից» (երգարանից) կարգացի «Մայր Արաքսի ակերով»-ը, որ վարժապետն էլ վրայ հասաւ. այն ոտանաւորը այդ գետի վրայ էր ասած այ:

Իսկոյն միտքս ընկաւ, թէ վարժապետը որ այն գիրքը տեսաւ, ինչպէս բարկացաւ: Վայ Լըթօ, քո արածները կրմոռացւի: Մի անգամ Լթօն գնաց սրճարան. Վահանն էլ ըստ սովորութեան հանեց իր երգարանը եւ սկսեց կարդալ: Մենք էլ հօ լսում էինք: Շատ բաներ

կարդալուց յետոյ՝ բացեց Արաքսի վրայ գրածը: Վերջին տունն էր մնացել, յանկարծ ներս մտաւ Լըթօն եւ տեսնելով գիրքը Վահանի ձեռքին, հարցրեց.

— Սյդ ի՞նչ ես կարդում, Վահան:

— «Տաղարան» է:

— Աբա կարդա՞ տեսնեմ:

Վահանն սկսեց կարդալ «Մայր Արաքսի ափերով»-ը, իսկ Լըթօն լուռ, ականջ էր դնում:

— Քննա՞ մի ամանով ջուր բեր, ասաց նա՝ երբ Վահանը վերջացրեց:

Դեռ չեմ մոռացել, թէ ինչպէս Լըթօն ջրի ամանն առաւ ձեռքը եւ ասաց.

— Ես քանի՞ անգամ եմ ձեզ պատուիրել, որ այդ «փրօղի» գրքերը չըկարդաք: Տեսնո՞ւմ էք, այդտեղ գրած է՝ իբր թէ՛ երբ այն մարդը Արազից բան է հարցնում, Արազը պատասխանում է. Արազն էլ ջուր է, այս ձեռքինս էլ, արա՞ թող խօսի տեսնեմ: ասաց Լթօն եւ սկսեց հռահռայով ծիծաղել: — Եթէ ուզում էք տաղեր սովորել, կիւրակի օրը եկէք եկեղեցի, Ժամի տաղարանը կրտամ, տարէք, ինչքան տաղեր ուզում էք սովորէք. . . Բայց եթէ միւս անգամ այդ գիրքը տեսել եմ ձեր ձեռքին, իմացած եղէք, որ պատառ պատառ կանեմ . .

Բարեբաղդաբար այս դէպքից յետոյ երկու անգամ միայն գնացինք ուսումնարան՝ եւ այն է փախել էինք:

Մինչեւ կէսօր Ղըզըլ-Ռազ պտըտեցինք, ոչ մի լամուկ չերեւաց:

— Նստենք այստեղ մի փոքր հանգստանանք, ասաց Վահանը:

— Քիչ էլ բարձրանանք, քիչ էլ, ասաց Սուրէնը, — աղբիւրի վրայ նստենք, լամուկներն էլ կըգան այնտեղ, կըտեսնուինք:

Մի փոքր էլ բարձրացանք, եւ Սուրէնը չոքեց, ականջը դրեց մի քարի վրայ ու քարը դէն գլորեց: Մեր առջեւ բացւեց մի աղբիւրի ակ, որ հողէ խողովակներից մարգարտի պէս պարզ ջուրը խշխշալով հոսում էր դէպի ցած: Սա միջնաբերդի աղբիւրի ակն էր:

— Սուրէն, ասացի — երեւի դու էլի մի քանի անգամ այստեղը անք եղել ես:

— Սյո՛, մեծ եղբայրս, ախ . . . որ կենդանի էր, ամեն անգամ ինձ բերում էր. նրա մահւանից դէսը՝ ինն ամիս է որ չեմ եկել:

— Սյ՛ Աստուած ողորմի նրա հոգուն, վրայ բերեց Վահանը, — տղայ նա էր այ՛, որ ոչ ահ ունէր, ոչ երկիւղ: Ես տեսայ, մի անգամ, որ նա փողոցի մէջ Աւդալ աղենց Հասանին ծեծեց, խաչ հայհոյել ու պատճառով . .

Թէեւ իսկոյն բռնեցին տարան «սարային» (դիւանատուն), բայց իր ճարտար լեզուով իսկոյն եւ եթ ազատուց: Այնպիսի մի տաս տղերք պէտք է լինեն մեր քաղաքումը, որ լամուկները առաջներիս կատու դառնան . . . Սեդրակեանցին ու նրա հին աշակերտներին չի հաւանում մեր պարոն Լըթօն, արած ինքն էլ այնպիսի մի աշակերտ ունենայ: Բայց ի՞նչ արած, որ հետը թշնամացան ու սպանել տրւին:

— Սուրէն, չիմացմը ուլ էր սպանողը:

— Ի՞նչպէս չէ. պատճառը Գէորգ ազի տղէն էր. սպանողը Հասանը: Չէ որ Արամը Խաչիկի աղջիկին ուզեց. այն օրը որ մենք հարսնախօս էինք ուղարկել Խաչիկենց տուն, Ալմաստին ուզելու եղբօրս, նոյն օրը Գէորգ աղէն էլ հարսնախօս է ուղարկում այնտեղ, Ալմաստին ուզելու իր տղին՝ Գաւաթուն: Բայց ազնիւ Խաչիկը նրանցը մերժել էր, մերն ընդունել, ասելով. «Իմ աղջիկը կըտամ «շի, ոչ թէ լոկ հարուստի» . . . Այս օր լսել է Գաւաթին, մտքումը դրել է եղբօրիցս վրէժը հանել: Եւ իմանալով որ Հասանը եղբօրս հետ թշնամի է, կաշառում է նրան, որ Արամին սպանի: Մի գիշեր Արամը միայնակ հարկաւոր գործի համար ուզում է գնալ Արծափ գիւղը: Այս իմանում է Հասանը եւ երկու քրդի հետ

Թախ է կենում ճանապարհին՝ մի քարի տակ: Եղբայրս միամիտ, հաղ կանչելով անցնելու ժամանակ, տմարդը քարի տակից արձակում է հրացանը եւ եղբօրս գետին գլորում: Ա՛խ . . . Աստուած, արդեօք պիտի կարողանամ վրէժս առնել, թէ իղձը սրտիս՝ պէտք է մտնեմ սեւ հողի տակ, եւ այնտեղ այս իղձով այրւիմ յաւիտեանս յաւիտենից . . .

Այս ասելով՝ նրա վառվռուն աչքերից դուրս ցոլացին երկու մարգարտանման կաթիլներ եւ նրանց հետ կրկին մի «անս» . . .

Երկար ժամանակ սիրտ էինք տալիս նրան, աշխատում էինք մխիթարել, բայց վերքը սրտի խորքից էր . . .



Երէկ չէ միւս օր՝ Արշ-աղբիւրումն էիք քաջա-
ցել. այստեղ էլ ձայն հանէք է՛:

Վահանն այս անգամ ոչինչ չըխօսեց, լուռ
վեր թռաւ տեղից, վերցրեց փայան ու ընկաւ
նրանց մէջ: Մենք հետեւեցինք նրան:

Մի քանի րոպէից յետոյ՝ մեր ոտքերի տակն
էին ընկած Սօսընն ու Բագօն, ձեռքները կա-
պտած իրանց գօտիներով. իսկ միւս չորս
լամուկները փախել էին: Սօսընը վէր ընկած
փնթփնթում էր. «Այս տարի սրանք կատաղել
են». իսկ Բագօն մի հարած ստանալով Սու-
րէնից, ուշաթափւել էր:

— Թողէք մի դրա արխնը խմեմ՝ սիրտս
հովանայ, ասաց Սուրէնը վաղելով դէպի Բա-
գօն, — Թողէք եղբայրն իր վրէժն առնի սպա-
նել տըւողի եղբօրից . . . Դա է լամուկներին
գրգռողը, դա է մեզ ու դրանց անընդհատ
կոււցնողը եւ այսքան խռովութիւնների պատ-
ճառը. թողէք իմ ձեռքով դրա դատաստանն
անեմ:

— Վերջը վատ կըլինի քեզ համար, ասաց
Վահանը, բռնելով Սուրէնին, որ երկու ձեռքով
մի ահագին քար էր վերցրել եւ կամենում էր
խքել Բագօսի գլխին:

— Խօսիր է՛, ասաց Վահանը, դառնալով
դէպի Սօսընը, — քաղաքի մէջն է լեզուները գ-

Ե.

ՀԱՆԳԻՊՈՒՄՆ



Մին էլ այն նկատեցինք, որ վե-
րեւից մի քանի հոգի գալիս են
դէպի մեզ: Մօտենալուն պէս ճա-
նաչեցինք, Սօսընն էր, Բագօն եւ
էլի ուրիշ չորս լամուկներ:

— Տղէքք, պատրաստեցէք, ասաց
Վահանը փայտը վերցնելով:

— «Քաֆրի» որդիք, գոռացին նրանք,
տեսնելով որ մենք թըւով քինչ ենք, — Խնչպէս
էք համարձակւել չորս հոգով Արզըլ-Բաղ գալ:
Դէ, առանց ձայն-ծպտուն հանելու՝ դատար-
կեցէք գրպաններըդ, վէր դրէք փայտներըդ
եւ այստեղից կորէք, թէ չէ՝ ձեր . . . սխեցին
հաղար ու մի տեսակ հայհոյանքներ թափել:—

երկար. քանի լայն տեղն էք, դ օ վ ը ր ա ն ը ձերն է՝ առիւծ էք կտրում, էլ խիղճ ասածը չէք գիտում ինչ է. որ նեղ տեղն էք ընկնում, նոր կատու էք դառնում: Սյտեղ էլ խօսիր է: Կարո՞ղ ես փայտէ խաչ շինել եւ կախել շան վզից. գիտես որ հայրդ «մղէյում» է, Հայերը նրա երկիւղից չեն կարող ձայն հանել: Յ Լ Լ * բառը, որ ինքն ըստ ինքեան մի անպատիւ խօսք է, դու այն էլ արժան չըհամարելով մեզ, կարո՞ղ ես ֆաֆըր ** ասել:

Սյտեղ էլ խօսիր, անհաւատ, ինչո՞ւ ես ձէնդ կտրել: Կարո՞ղ ես Վարդի քրոջը աղբիւրի ճանապարհին բռնել եւ համբուրել. նա էլ իմանալով՝ մի օր ընկել է յետեւիցդ, եւ չըկարողանալով բռնել, մի քար է գցել յետեւիցդ. դիպել է, չի դիպել՝ հայրդ բռնեց նրան եւ վճռեց մի ամիս ներքնատան բանտը ձգել. այս

* Բայազէդու սաճիկները բոլորն էլ սովորաբար քրդերէն են խօսում: Քրդերը Հային Յ Լ Լ ա են ասում, եւ այդ բառը այնքան դործածական է դառել, որ Հայերն անգամ չըհասկանալով բռն միաքը, իրանց այդպէս են կոչում: «Յ Լ Լ ա» նշանակում է՝ ծառայ, աշխատող, իբրև ստրուկ ուրիշների համար: Նրևէ այդպէս են կոչում նրա համար, որ Հայի աշխատանաց արդևենքը իրանք են վայելում . . .

**) Քաֆըր նշանակում է անհաւատ, կուսպաշտ:

տապահինգ օր է՝ խեղճը այնտեղ աղի արտասունք է թափում. . . Կարո՞ղ ես, երբ խեղճ Ստեփանի խնամիքը Սլաշկերաից կրգան իրանց հարսը տանելու, երեկոյեան տէրտէր տիրացուներով կրնասեն ուրախութիւն անելու, որ առաւօտը ճանապարհ ընկնեն, դու եւ քեզ նման սատանի լակոտներ բերէք մի սատկած շուն եւ կտուրից գցէք բուխարու մէջ, որտեղ խեղճ աղքատը կերակուր է պատրաստելիս լինում հիւրերի համար . . . Քո ո՞ր արածն ասեմ, շո՛ւն. դեռ որ փոքր ես՝ այդ ես անում, որ՝ Աստուած ո՞չ անի՝ մեծանաս, ի՞նչ կանես . . .

— Կարո՞ղ ես թղթի վրայ ձեր լեզուով գրել «Չահնամ» եւ «անհաւատից ժողովարան» ու տանել կպցնել մեր եկեղեցու դռան . . . ասացի ես: Կարո՞ղ ես ջուր թէ՛ ինչ . . . մեր քահանայի գլխին ածել, երբ ձեր պատուհանի տակով անց կենալիս կըլինի: Վերջապէս կարո՞ղ ես Լըթօին մի գլուխ շաքար կաշառք տալ, որ մեզ ծեծի: Խօսիր է, դուք սարդի նման արիւններս ծծեցիք. ասացի ու մի փայտ իջեցրի նրան:

— Ո՞ր է Լըթօին կաշառք տրւել, ասաց Սօսընը խեղճ-խեղճ: Վահան, քեզ մատաղ, այս անգամ թողէք, երդւում եմ Մահամմէդի

եւ Աստուծոյ անունով, որ միւս անգամ ձեզ ու ձեր ընկերներին բան չեմ ասիլ:

— Գուցէ մեզ չասես, բայց մի ուրիշ հայ տղի ասես քաֆըր, որ միեւնոյն է մեզ ասած: Մեկընք, Կիօն ու Ղազարը չէին, որ քեզ էլի այսպէս բռնել էին. եւ շան վզից խաչ կախելու պատճառով կամեցել էին ծեծել, բայց գու ներողութիւն էիր խնդրել, խոստանալով միւս անգամ այնպիսի բան չանել. արձակելով նրանցից, գնացել էիր հօրդ գանգատել եւ այն անգութը բռնել էր նրանց ամեն մէկին հինգ հարւած «Փալախայ» խբել տրել: Ծրագով ման գացինք՝ չէինք կարող քեզ այսպէս գտնել. հիմա որ հազիւ ես ընկել ճանկներս, ուզում ես աղատել, շողոքորթ շուն: Սյս բուպէիս չէր, որ հեռւից տեսաք մենք քիչ ենք, ուրախական աղաղակներով, «Մամմարէ՛ սալաւա՛ն» աղաղակելով (իբր թէ՛ Մահամմէդի շնորհիւ յաղթութիւն), վրայ վաղեցիք, եւ Աստուած մի արասցէ յաղթէիք, հումհում միսներս կուտէիք: Ահա, այս ձեռքիս ատրճանակը չէր, որ գրպանիցիդ հանեցիր, կամենում էիր ինձ վրայ արձակել, որ Քեալաշն ու Զօհրաբը խլեցին: Զեր մէջ մի առած կայ, որ ատում է՝ «Ղանիմա՛ զանիմ» (ինչպէս կրվարէք ուրիշների հետ, այնպէս էլ ուրիշները կրվարւեն ձեզ հետ):

Սյս ասելով Վահանը, մի փայտ իջեցրեց Սօսընին:— Ի՛է հիմա գնա «բ ս ա կ բ ս ա կ է կ ու ր մ ա ն ջ ա ն» * պահիր:

Սօսընի գլխից սկսեց արիւն հոսել:

— Տղերք, ասաց Զօհրաբը, — եկէք մեր գլխի ճարը տեսնենք, թէ չէ՛ կորած ենք: Հիմա սրանց ընկերները կըհասնեն քաղաք, իմաց կըտան մղէյումին եւ կընկնեն մեր յետեւից: Ի՞նչ ես կանգնել, Վահան:

Իսկոյն թողեցինք նրանց եւ իջանք ձորը:

— Սուրէն, ասաց Վահանը, — մի բան կուտեմ՝ չընեզանաք: Տեսաք ես ու Քեալաշը խրբեցինք Սօսընին, ուրեմն պէտք է փախչինք, որ աղատինք. իսկ դու եւ Զօհրաբը լաւ կանէք՝ որ մեր պատճառով ձեր գլուխը քարէքար չըտաք: Բացի դրանից՝ մենք հարուստ մարդկերանց որդիք ենք, եթէ բռնըլինք էլ, կարող ենք փողի շնորհիւ աղատուիլ. բայց դուք չքաւոր մարդկերանց որդիք էք, եթէ մեզ հետ գաք եւ պատահի, որ բռնուինք, ձեզ համար շատ վատ կըլինի. . . . Ես խորհուրդ կըտամ, որ գնաք տուն եւ եթէ քննութիւն կըլինի, ասէք՝ Վահանն ու Քեալաշը ծեծեցին դրանց:

* Այսպէս է կոչուում այն սխախալութիւնը, որ քուրջցեղերն մէջ որդոց որդի մտում է իրեն ժառանգութիւն:

Դէ, էլ մի ուշանաք, որ այստեղ մեզ միասին բռնեն, աւելի վատ կըլինի . . .

— ձիշտ է ասում Վահանը, Սուրէն, վրայ բերի ես:

— Թէպէտ ձեզանից բաժանուիլը դժուար է մեզ համար, ասացին Սուրէնը եւ Զօհրաբը միաբերան, — բայց հանգամանքներն ստիպում են այդպէս անել: Ուրեմն գնաք բարով, միայն եղբայրութիւնը չըմոռանաք:

Մենք գրկախառնուեցինք:

— Սուրէն, ասաց Վահանը: — այսուհետեւ որ մեռնիմ էլ, ինձ համար դարդ չ'անէք. իմացած եղէք, որ «Թասիբ»-իս համար մեռայ, էլ դարդ չըմնաց սրտումս . . . Մնաք բարով. դուք էլ մեզ չըմոռանաք . . .

Բաժանուեցինք: Նրանք գնացին դէպի տուն, մէյդանի կողմից. իսկ մենք իջանք Գետ-Վարդանայ ձորը:

— Վահան, հիմա ո՞ւր գնանք: Գու վազուց ասում էիր՝ գնանք Կակօի գնացած երկիրը, այնտեղ՝ որ այնպէս լաւ ուտում են սփորեցնում: ուղում ես փախչենք այնտեղ, թէ . . .

— Քեալա՛շ, ես ասում եմ հիմա գնանք Ա. . . գիւղը, իմ հօրեղբայր Սերոբենց տուն. նրանք մի քանի օր մեզ ծածուկ կըպահեն, մինչեւ տեսնենք քաղաքից ինչ լուր կըգայ:

Իսկ ինչ վերաբերում է այն երկիրը գնալուն, այդ յետոյ:

Ես նկատեցի, որ Վահանը վրդուլած էր: Սյո՛, նա վրդուլած էր նրա համար, որ հանգամանքն ստիպել էր մեզ բաժանուիլ երկու ամենամտերիմ ընկերներից, — Սուրէնից եւ Զօհրաբից: Բաժանուիլ այն երկու անձնաւորութիւններից, որոնք մեզ համար թանգ արժէին քան հայր, մայր, եղբայր, եւ ամենամտիկ մի բարեկամ: Բաժանուիլ նրանցից՝ որ սկսած մանկութիւնից՝ մեծացել էինք միասին, մի հոգով. ծեծել էինք միասին, ծեծւել՝ միասին, կերել՝ միասին, քաղցած մնացել՝ միասին: Բաժանուիլ, բաժանուիլ՝ գուցէ այլեւս միմեանց չըտեսնել . . .

Սյո՛ւ ժամանակ միայն ես մտածեցի, թէ ինչ տրամադրութեան մէջ էր գտնուում նա: Իմ աչքերի առաջ եւս տպաւորւեցան հազար ու մի տեսակ պատկերներ: Ես տեսնում էի պատկերացած «ղափթիէք», որոնք մեզ բռնած, ձեռքներս կապած քամախներիցս, գցել էին առաջները եւ հրացանի «դօնդախով» թիկունքներիս խբելով, քշում էին դէպի քաղաք: Հասանք քաղաք: Ժողովուրդը հաւաքւել էր ձանապարհի այս ու այն կողմը, տեսնելու չարագործներին — մեզ: Լըթօն էլ նրանց մէջն էր: Նա քմծիծաղով նայում էր մեզ վրայ եւ

աչքերը շուռ ու մուռ տալիս, հասկացնելով, որ իր խօսքը չըլտողն այնպէս կը պատժւի: Տարան մեզ բերդը եւ ձգեցին մահապարտների «զընդանը»: Քիչ ժամանակից յետոյ, ծեծելով մեզ մօտ բերին եւ մեր ամբողջ ընտանիքները: Իմ հայրս Վահանի հօրից էր գանգատոււմ, որ նրա որդին եղաւ իմ կորստեան պատճառը, նրա հայրն էլ՝ իմ հօրից: Մայրս, որ նոյնպէս բերել էին, ինձ տեսնելով՝ չոքեց բանտի խոնաւ գետնին եւ կամենում էր իր տըւած քաղցր կաթով անիծել ինձ, որ մեր պատուաւոր տան աւերման պատճառը դառայ . . .

Այն էր, մօրս պարանոցովն ընկայ, որ խնդրէի, իր անառակ որդուն չանիծէ, մէկ էլ՝ Վահանի ձայնն սթափեցրեց ինձ:

Աչքերս բաց արի, տեսայ մի ահագին քար, երկու ձեռքովս սեղմած կրծքիս: Թողեցի քարը եւ մտեցայ Վահանին: Նա եւս յափշտակած՝ խօսում էր ինքն իրան.

«Մի լար, Հերիքնազ, ասում էր նա, — մի լար, թէեւ ես գնում եմ, բայց շուտով կը վերադառնամ ու քեզ էլ այստեղից կազատեմ, կըտանեմ . . . Հօ իմ ասածս արեցի, հօ «նրա» հա խից եկայ, էլ դարդ չըմնաց սրտիս, հօ . . .

Մի փոքր նրան լսելուց յետոյ՝ հասկացայ, որ այն խօսքերը նա ուղղում էր իր սիրուհուն:

Վահանը թէպէտ տանեւ թ տարեկան մի պատանի էր, բայց քաջութեամբ եւ խելքով իր հասակից անհամեմատ մեծ էր: Ուստի նրա այսպէս յափշտակելը՝ ինձ միանգամայն զարմացրեց. որ եւ անմիջապէս ձայն տըւի.

— Վահան:

Նա ինչպէս քնից նոր արթնացած՝ մի տեսակ հայեացք ձգեց իր շուրջը եւ անխօս, ափշած մնաց: Ես ոչինչ պատճառ չըգտնելով ասացի. «Ի՞նչ ես պառաւ կնկայ պէս տընգտընգալով մանգալիս. հարսանիք հօ չե՞նք գընում: մի քիչ քայլերդ շտապեցրօ՛ւ:

Նա շտապեց:

Մենք անցնելով Քեաստակայ գէղուկը, Աղբիւն արայ ձորը, եւ Վապոյտ բլուրը՝ իջանք Գռնաուկայ դաշտը եւ այնտեղից մտանք «սագ»-ի (եղեգնուտ, դամիշլըղ) մէջը: «Սաղը» մի եղեգնեայ ծով է, որ ձրգուում է Մասիս լեռան հարաւային ստորոտներում, արեւմուտքից երեւելք. Սրծափ եւ Ղարաբուկազ գիւղերի մօտերքից սկսած, մինչեւ Պարսկաստանի սահմանները, — տեղ-տեղ կտրուելով եւ մի փոքր հեռու կրկին սկսւելով:

Մտնելով այն եղեգնեայ անտառի մէջ, մենք մի փոքր ապահոված էինք համարոււմ. որովհետեւ՝ եթէ հարիւր հոգի անգամ գային

մեր յետեւից, ջէին կարող գտնել: Այստեղ մեզ պատեց մի ուրիշ երկիւղ, դա վայրենի վարազների եւ կինճերի ահն էր, որ ամբողջ երամակներով էին շրջում այնտեղ: Բայց նրանց մի անգամայ ժանիքները մենք գերադասում էինք լամուկների տըւած ամենօրեայ նեղութիւններից եւ մշտական ու անվերջ հայհոյանքներից, որ թափում էին մեր սուրբ կրօնի եւ աղգութեան վրայ:

Սրդէն երեկոյ էր, մենք հասանք «սաղը». շուտով մութը պատեց աշխարհը եւ մենք թաղւեցինք եղեգնեայ լաբիրինթոսի մէջ: Բաւական էր մի տերեւի սօսիւն՝ եւ մենք կարծում էինք յետեւներիցս հասան: Յանկարծ ոտքներիս մօտից դռուացնելով թռչում էր մի սագ կամ բադ, եւ մենք լեղապատառ յետ էինք փախչում, կարծելով՝ ամեհի վարաղի ժանիքներն են, որ կամենում են մեր աղիքները վէր թափել: Ահա այսպէս՝ երկու անփորձ պատանիներ, հօր ու մօր ձեռքի տակ աղիզ պահած, գիշերները տասն անգամ վերմակը ծածկած, որ չբացուեն ու մրսեն, յանկարծ մի մութ գիշեր ընկնեն մի այսպիսի տեղ, ուր ցերեկով տասը զրահաւորւած մարդիկ սիրտ չեն անիլ թէ մտնեն. երեւակայեցէք ինչ դրութեան մէջ կըլինին: Ամբողջ միջնագիշերը մնորեւ-

լով «սաղի» մէջ, առաւօտեան արշալոյսին հազիւ կարողացանք ուղիղ ճանապարհի վրայ դուրս գալ, — Արաբուլաղ գիւղի մօտերքը:


Եւ արեւը նոր ծագած՝ հասանք Ա. . . . Հայաբնակ գիւղը եւ գնացինք Վահանի հօրեղբայր ու է ս (տանուտէր) Սերոբենց տուն: Նախաճաշիկ անելուց յետոյ՝ պատմեցինք նրանց գործի եղելութիւնը: Սերոբը մի խելօք մարդ էր. նա մեզ խորհուրդ չըտեց գիւղում կենալու, որովհետեւ՝ ինքը իբրեւ ու է ս՝ պարտաւոր էր բոլոր փախստականներին բռնել եւ տէրութեան ձեռքը մատնել: Եթէ մենք կենայինք նրա տանը եւ պատահամք բռնուէինք՝ այն ժամանակ թէ մենք կըկորչէինք, եւ թէ ինքը:

Սերոբը մեզ մինչեւ երեկոյ պահելով իրանց տանը, միջանը, իր որդի Պապիկին դրեց մեզ հետ եւ ուղարկեց իրանց գիւղի համանուն սարի կրճքին եղած մատուռը, որ կոչւում էր Ծ ա ղ կ ա վ ա ն ք:

Ներս մտնելով մատուռը, երկրպագութիւն տըւինք եւ սկսեցինք աւել այնտեղի անմաքրութիւնը, որ քուրդերի արածը կըլինէր:

Այդ մատուռը, որ հազիւ էր տարին մի անգամ «Տէր ողորմեա»-ի ձայն լսում, այն էլ միայն իր տօնին՝ այսօր զընգզընգում էր Վահանի քաղցր՝ դժբաղդաբար ցածր ձայնով, որ շուտով էլ կտրեց . . .

Պապիկը մեր հասակակից մի բարձրահասակ տղայ էր: Նա չբաժանուէր մեզանից. ամեն առաւօտ՝ վաղ՝ գնում էր գիւղը, տեղեկութիւններ էր իմանում քաղաքից, եւ տանից հաց ու կերակուր վերցնելով, գալիս էր մեզ մօտ եւ այնտեղ գիշերում:



2.

ՊԱՆԴԻՍԱԿԱՆ ԳԱԻԱԶԱՆ



բորդ գիշերն էր:

Լուսինը Փոքր-Մասիսի կողմից դուրս էր եկել եւ իր աղօտ լոյսը սփռել էր Գոնաւուկայ դաշտի եւ եղեգնուտի վրայ: Խոր լուսթիւն էր տիրում: Զընայած այն տեղի ցուրտ կլիմային, այն տարի եղանակը շատ լաւ էր անցնում: Միայն մեղմիկ զեփիւռն էր հանդարտ զըղըղում եւ եղեգները շփելով իրար մի փոքր կենդանութիւն տալիս դաշտին:

«Գողն ի՞նչ կուզի — մութը գիշեր», ասում է առածը: Ամբողջ ցերեկը դուրս չբալով մատուռից, որ քուրդ հովիւներից չընկատւիւք, անհամբեր սրտով սպասում էինք գիշերւան: Հէնց որ մութն ընկաւ, հովիւ, հօտաղ, նախարապան գնացին դէպի գիւղը, մենք դուրս

եկանք մատուռից՝ մի փոքր լոյս-աշխարհ տեսնելու: Բարձրացանք դէպի վեր, սարի գագաթի կողմը:

—Սյտեղ լաւ բ ա ո ժ (լուսնի ճառագայթները ընկած) տեղ է, ասաց Պապիկը, — նստենք այս քարի տակին մի քիչ խօսենք:

Նստեցինք: Մենք սկսեցինք լամուկներից կրած նեղութիւններս պատմել նրան: Յանկարծ ականջներիս հասաւ մի հրացանի ձայն, որ շուտ-շուտ մի քանի անգամ կրկնեց:

Վեր թռանք տեղներիցս:

—Սյս ի՞նչ էր, Պապիկ, ասաց Վահանը, — ձայնը մօտիկից է: Գուցէ սահմանապահ «զալիթիէքն» են, որ Ղարաբուլաղ են կենում՝ դուրս են եկել ման գալու: Բարձրանանք վերեւ՝ ժայռերի մէջ, գուցէ գան այս կողմերը եւ մեզ նկատեն:

—Ի՞նչ ես ասում, ասաց Պապիկը հեգնական ժպիտով, — ո՛վ գիտէ հիմա նրանք խրաբրութեամբ քնած են. ես նրանց լաւ եմ ճանաչում: Նրանց ասա՛՛ցրե՛ր կողմը գուրս գան, հրացանները թախկ-հա-թախկ արձակեն, թէ՛ տեսէք, տեսէք սահմանապահ ենք. ի՞նչ նրանց գործն է գիշերով դուրս գալ: Գուրս էլ որ գան՝ իրանցն է վնաս. աւազակները չեն կարող մարդ կողոպտել ու կէսն էլ իրանց տալ . . .

—Սպա այդ ի՞նչ հրացանի ձայներ էր, հարցրի ես:

—Մօտակայ կիրճի (Արծփայ քարի) մէջ աւազակները վրայ տըւած կրկնին կարաւանի կամ ճանապարհորդների: Սյնտեղ ամեն ժամանակ աւազակութիւններ են լինում: Իրանք՝ «զալիթիէքն» էլ գիտեն, բայց թալանած ապրտնքի կէսն իրանցն է, դրա համար ուշք չեն դարձնում: Վահան, եկէք այս քարերի արանքներով կամաց-կամաց գնանք այն կողմը, տեսնենք ի՞նչ կայ:

—Ուղում ես զօռով գլխներս փորձանքի տանք . . .

—Ի՞նչ փորձանք: Զօ չենք գնալ կիրճի մէջ, որ մեզ փորձանք սլատահի. քարերի արանքներով կրգնանք ու հեռւից մտիկ կանենք: Գողեքն այդ մօտակայ գիւղերայքից կրկնին*, ձիաւորներ, հօ փախչելիս չեն տայ այս քարալների միջով գնալ, որ մեզ վնասեն:

—Լաւ, գնացինք, ի՞նչ օգուտ դրանից:

—Օգուտ էլ կրկնի: Շուն աւազակները

* Աւազակութիւնն ինչպէս որ ըտրը՝ նոյնպէս՝ եւ այնտեղի քրդերի համար մի սովորական պարապմունք է: Քուրդը աւազակութիւն անելու գնալիս, աներկիւղ եւ անամօթ ասում է ամենքին. «Երօ ամէ հաւըն քրդեաւըն» (այսօր պէտք է մենք գնանք մանդալու), այսինքն՝ աւազակութիւն անելու:

Հիմա ինչ կայ չըկայ կըտրբեն, խեղճ ճանապարհորդներին էլ մերկացնելով, ձեռքներն ու ոտքները կըկապտտեն, այնպէս կըթողեն, կըկորչեն: Այն խեղճներն էլ մերկ, ձեռք ու ոտք կապած կըսառչեն, մինչեւ ո՞վ գիտէ էգուց, էրբ, անցնող լինի, որ կապանքներն արձակի, վեր կենան՝ գնան: Այ, Վահան, մեր օգուտն էլ այն կըլինի, որ երբ գողերը կըփախչեն, կըգնանք նրանց կապերը կարձակենք:

— Վայ թէ նրանցից մեզ ճանաչող լինի, ասաց Վահանը:

— Լաւ, գնանք, դուք քարերի մէջը պահւեցէք, ես կըգնամ կարձակեմ, ասաց անձնավրտահ Պապիկը:

Մենք համաձայնեցինք: Կամաց կամաց, քարափների արանքներով դիմեցինք դէպի կիրճը: Ինչպէս որ Պապիկը նախագուշակել էր՝ հէնց այնպէս էլ եղաւ: Նրանց մօտիկանալով, տեսանք ամեն բան վերջացած, գողերը փախած, մի քանի հոգի գետնին վէր թափած: Մենք այնքան մօտ էինք նրանց, որ ձայները լսում էինք:

— Արաւուրդն էլ գնացած կըլինի, ասաց Պապիկը, — Վահան, դուք սպասէք, ես գնամ նրանց արձակեմ:

— Տղայ, անխոհեմութիւն չանես, ասաց Վահանը նրա յետեւից:

— Թէ ես Պապիկն եմ, իմ բանը գիտեմ, ասաց նա սլառանեկական սնապարծութեամբ, եւ գնաց դէպի ցած:

Մենք մի փոքր բարձրացանք, նստեցինք մի քարի տակ եւ սկսեցինք խօսիլ:

Լուեց Պապիկի խորհրդաւոր ձայնը — շրվշրվոցը: Վահանը սլառասխանեց նրան նոյն ձեւով: Նա մօտեցաւ մեզ մի երիտասարդի հետ միասին: Մենք լուսնի աղօտ լուսով չըկարողացանք ճանաչել երիտասարդին եւ ոչ էլ նա մեզ, որովհետեւ Պապիկը մեր մասին ոչինչ չէր ասել նրան:

— Բարի երեկոյ, ասաց երիտասարդը:

Լսելով ձայնը եւ մօտենալով նրան, տեսանք որ Յարոնն էր — Սուրէնի հօրեղբօր օրդին:

— Վահ, Վահան, Բեալա՛շ, ասաց նա փաթաթելով մեզ: Գուք այստեղընք: Չէ՞ որ ձեր ճնողները մեռան ձեզ պտրելով: Գեր տներում սուգ ու շիւան է ընկել. կարծում են թէ դուք գիշերը դուրսն էք մնացել, վայրենի գազանները սլառառոտել են: Մինչեւ անգամ ձիով ջօլերն էին ընկել, գուցէ կարողանան ձեր դիակների հետքը գանել: Ա՛րքան կուրախանան նրանք, եթէ խմանան, որ դուք կենդանի էք:

— Յարոն ջան, ասաց Վահանը կտրելով նրա խօսքը, — դրանք երկրորդական հարցեր

են. մենք այժմ մի այնպիսի դրութեան մէջ ենք գտնուում, որ չենք կարող ծնողաց վրայ մտածել: Դու այն ասա՝ Սօսրնն ու Բագօն ինչպէս եղան:

— Շանը օլում (մահ) կայ . . .

— Պատմիր տեսնենք ինչպէս գնացին նրանց բերին, այժմ ինչպէս են նրանք: Սուրէնին ու Զօհրաբին հօ ոչինչ չասացին: Սյդ պատմիր, մեզ այդ է հարկաւոր:

— Սօսրնին ու Բագօին որ դուք խբել էիք վեր գցել, նրանց ընկերները գնացել էին Ահմադ-աղին խմաց տրել: Նա էլ իսկոյն հեծել էր ձին, գնացել «զարութխանէն» (ոստիկանատուն), եւ վերցնելով մի քանի «զալիթիա», գնացել էր Արզըլ-Բաղի աղբիւրը: Սօսրնի ու շր գլխին է լինում, իսկ Բագօն՝ ուշաթափ: Երկուսին էլ դնում են ձիու վրայ ու տանում տուն: Զինուորական բժիշկը հաղիւ է կարողացել մի փոքր լաւացնել: Միւս օր սկսեց հարց ու փորձը: Ամենքն խմացան գործի եղելութիւնը: Թուրքերը կատաղել էին, որ հայերի տղերքը համարձակել են Ահմադ-աղի պէս մարդու որդուն ծեծել: Իսկ Հայերն ուրախացել էին, որ վերջապէս տաճկի այն գոռոզ լամուկը ծեծւեց Հայ տղերքից. Հայի ծեծն էլ տեսաւ — որ ամենեւին չէր երեւակայում: Նա հաս-

կացաւ, որ Հայն էլ ծեծել գիտէ, ոչ թէ ստեղծւած է միայն ծեծւելու համար՝ ինչպէս նա կարծում էր: Սյն, հասկացաւ որ Հայն էլ ծեծել գիտէ, եւ միայն այն ժամանակ երբ նրա բարկութիւնը հասնում է ծայրայեղութեան . . .

— Սյդ մենք էլ գիտենք. դու ասա տեսնենք՝ Սուրէնին ու Զօհրաբին ոչինչ չասացին:

— Ինչպէս չէ. կացէք մի ասեմ է: Չէ որ «մղէյումն» ինքը Ահմադ-աղին է, իսկ «բէյիզը» (գատաւոր) նրա բարեկամը. ուրեմն հաւանական է, որ Սօսրնին ու Բագօին արդար դուրս կրբերէին: Ուտի վճուեցին՝ եթէ ձեզ բռնեն, 30-ական ճիպոտ «ֆալխայ» խբեն, իսկ Սուրէնին ու Զօհրաբին՝ իբրեւ ձեզ պէս վատ տղայոց ընկերներ՝ վճուեցին հինգ-հինգ ճիպոտ: Նրանց խբոյր Գէորգ-աղի տղէն էր՝ Գաւաթին, որ իր եղբօր վրէժն առնելու համար, խնդրել էր գահճութեան պաշտօնն իրեն յանձնել: Ծիպոտն էլ ինքն էր բերել, այնպիսի ճիպոտ, որ մարդ չէր կարող կտարել: Առաջին անգամ Սուրէնին խբեցին: Սնխիղճն այնպէս էր խբում, որ ինչ ասեմ, դուք գիտէք թէ նրանց ցեղը՝ սկսած Գէորգ աղի պապից՝ ինչ խղճի տէր մարդիկ են: Ինքը՝ Գէորգ աղէն էլ բազմել էր «բէյիզի» կողքին:

Սեղբակեանցն էլ էր եկել այնտեղ (Լը-

Թօփ հոտը չրկար): Նա նայում էր Գէորգ աղին, նայում էր «բէյիզ» ու «մըէյումին», արդարութիւն էր պահանջում, բայց ո՞վ էր նրան լսող: Խեղճը՝ տեսնելով որ իրեն խօսքերին ուշք չեն դարձնում, դուրս եկաւ ցածր ձայնով ասելով. «Տանջեցէք մեզ՝ Հայերիս, տանջեցէք. ձեր տանջանքներից է կախած Հայի փրկութիւնը: Կրգայ ժամանակ, որ Հայի մորմոքների ձայնը կըհասնի Երկնաւոր Տիրոջ Աթոռին . . . կրգայ ժամանակ, որ Հայի հառաչանքները կըհասնեն քրիստոնեայ թագաւորներին. այն ժամանակ դուք ձեր արածների փոխարէնը կըստանաք . . .

Սուրէնին շալակած տարան տուն. ամբողջ օրը խելքը գլուխը չեկաւ: Հիմա պառկած է:

— Աստուած ինքը օգնութեան հասնի: Հաբա Զօհրաբին. ասա տեսնենք, նա ի՞նչպէս եղաւ:

— Զօհրաբին էլ նոյնն արեցին, միայն այն դանազանութեամբ, որ նա խբելու ժամանակ աւելի շատ էր լաց լինում: Առաջին հարածը խբելուց յետոյ՝ նա աչքերը ձգեց անգուլթ Դաւաթու երեսին եւ հառաչեց. «Դու Հայ չես» . . . Նա եւս մի քանի ձիպտոից յետոյ ուշաթափեց: Զօհրաբի եղբայրը — Սարօն՝ հէնց այն գիշերը՝ Ահմադ աղենց պատուհանից մի ասհագին քար է ներս շարտում, որ դիպչում

է նրա աղջկան եւ ոտը ջարդում: Յետոյ պատահում է Գէորգ աղին, մի լաւ դուռանակ էլ իջեցնելով նրա գլխին, արենլըւիկ է անում ու փակչում: Դրանից յետոյ՝ հիմա թուրքերը այնպէս են վախենում Հայերից, որ չեն համարձակում մի քիչ բարձր խօսել: Միւս օրը անմիջապէս Զօհրաբի հօրը եւ հօրեղբօրը կալանաւորեցին, եւ շղթայակապ «ղնդանը» ձրգեցին: Հիմա «մըէյումն» անձամբ, քառասուն «սուվարու» (հեծելազօրքի) հետ՝ ման են գալիս Սարօի եւ միեւնոյն ժամանակ ձեր հետեւից: Դուք կարող էք՝ այստեղանքից հեհեռացէք, թէ չէ՝ կըբռնէք: Դէ մնաք բարով, ես գնամ, հիմա ընկերներս կըգնան:

— Կնաս բարով. Յարոն ջան, ոչ ոքի բան չասես: Բայց երբ վերագառնաս քաղաք, մեր երկուսիս տանեցո՞նցն էլ կասես, որ՝ անհոգ կենան, մենք ազատուած ենք, եւ հէնց վաղը պիտի գնանք այստեղից մի աւելի ապահով տեղ:

Յարոնն ու Պապիկը գնացին դէպի ճանապարհորդները: Նրա հետ խօսակցութիւններս այնպէս շտապով եղաւ, որ մենք մոռացանք հարցնել նրանց կողոպուելու մասին:

— Ի՞նչ անենք, Վահան, հարցրի նրանից:

— Եգուց գիշեր ճանապարհ ընկնենք դէպի իմ ասած երկիրը — Եջմիածին:

— Բայց մեր քաղաքի կարաւանը միշտ այն-
տեղ գնում: գալիս է. գուցէ նկատենք: Մի առ
ժամանակ հարկաւոր է մեզ մի այնպիսի խուլ ան-
կիւն, որ մեր քաղաքից գնացող եկող ջրլինի:

— Կրան էլ ճար կայ, ասաց Վահանը: Աբա-
րանայ Մ . . . գիւղում մեզ մի ծանօթ կայ, որ
Բէյբուժովի պատերազմին ռուսաց իւզբաշի էր
եւ ռուսաց մեր քաղաքում կացած ժամանակը
մեր տանն էր կենում: Կրգնանք նրանց տուն:

— Բայց, Վահան, դու մինչեւ այնտեղ
ճանապարհը գիտես:

— Ես մի երկու անգամ գնացել եմ Իգգիր-
նրանից դէն ուղիղ ճանապարհ է, կրբունենք կը-
գնանք. Խնչ ունինք, որ ինչնորիցս վախենանք:

Վերադարձաւ Պապիկը: — Տղէրք, էլ ժա-
մանակ ջրպէտք է կարցնել, ասաց նա:

— Ուրեմն դու գնա գիւղ, ասաց Վա-
հանը, — ճանապարհի պաշար բեր, որ էգուց
ճանապարհ ընկնենք:

— Լաւ, գնամ. գիշեր բարի. աքաղաղը
գեռ չի կանչիլ, կըգամ:

— Քեզ լոյս բարի:

Պապիկը գնաց: Մենք էլ գիմեցինք մեր
օթեւանը — մատուռը:

Միւս գիշեր լուսինը նոր էր դուրս եկել
հորից, որ մենք պատրաստուել էինք
ճանապարհ ընկնելու: Պապիկը տխուր կանգ-
նած էր մեր առջեւ եւ կարծեա չէր կամե-
նում բաժանուել մեզանից:

Ներս մտանք մատուռը. վերջին անգամ
համբուրեցինք քայքայած սուրբ սեղանը եւ
«բարի բախտ» խնդրելով՝ ճանապարհ ընկանք
գէպի հիւսիս — Մասիս: Բաւականին տարա-
ծութիւն նա մեզ հետ եկաւ: Դեռ էլի կա-
մենում էր գալ, բայց մենք արգելեցինք:

Եկաւ վերջին հրաժեշտը:

Երկու եզբօր որդոց ոչ մէկի լեզուն չէր
բացուում խօսել: Լուռ ու մունջ ընկան իրար
պարանոցով, սկսեցին իրար համբուրել եւ հե-
ղեղի պէս արտասուք թափել: Ապա ես շնոր-
հակալութիւն արի Պապիկի ցոյց տըւած ըն-
կերասիրութիւնից եւ հեռացանք: Նա երկար
ժամանակ կանգնած նայում էր մեր յետեւից:

Կէս գիշերն անցած կըլինէր՝ հասանք
Ջրլի գէգուկը: Սյնտեղից գեռ երեւում էր
մեր քաղաքը — իր սարերով ու դաշտերով: Մի
անգամ էլ երեսներս յետ շուռ տըւինք եւ
նայեցինք այն երկրին, ուր կեանք էինք ստա-
ցել: Սյգտեղ էր, որ իմ շրթունքներից դուրս

Թուաւ. «Ա. խ, հայրենիք, կըլինի՞ որ մի անգամ էլ անցնեմ այս սարը եւ ազատ ոտք դնեմ քո սուրբ հողիդ վրայ» . . . Այս խօսքերիցս յետոյ՝ կարծես մեզմիկ զեփիւռը զըզըզլալով փսփսում էր ախանջիս.

— Գնացէք անխորձ պատանիներ, գնացէք եւ տեսէք՝ թէ ինչ կընշանակէ օտարութիւն . . . տեսէք, թէ ձեր վարդ կարծեցեալ թուիր ինչպիսի փշեր ունի իւր քնքուշ ծաղիկների տակ ծածկած . . . այն ժամանակ միայն կարող էք հասկանալ ինչ է պանդխտութիւն եւ ինչ է հայրենիք . . .

Այսպէս՝ մէկ յետ նայելով, մէկ շարունակելով ճանապարհներս, այնքան գնացինք, մինչեւ մէկ էլ յետ նայելով՝ էլ ոչինչ չերեւաց մեր աչքերին, որովհետեւ մի ահագին ժայռ ընկել էր մեր քամակը եւ յետ նայելիս արգելում էր տեսնել անոյշ հայրենիքը . . .



7280

2013

